

«ԱՐՄԵՆԲՐՈՎ»

ԲԱՅ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013թ.

ԵՐԵՎԱՆ 2014

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



**BAKER TILLY
ARMENIA**

22 Hanrapetutyany Street
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-307
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

30/04/2014

N 011408

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

**«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն**

Փ. Վարդյան

Աուդիտորական ծառայությունների իրականացում
լիցենզիա թիվ 054 տրված 22 ֆետևրուարի
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ
Բաժնետերերին**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ -ի (այսուհետ՝ «Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2013թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվությունը

Սույն հաշվետվությունների՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ «ՀՀՄՍ») համաձայն պատրաստման և արժանահավատ ներկայացման համար պատասխանատու է տնօրինությունը: Այդ պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներ չպարունակող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և իրական ներկայացման նկատմամբ ներքին վերահսկողության մշակումը, կիրառումը և պահպանումը, պատշաճ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա կարծիք արտահայտել սույն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտների համաձայն: Այս ստանդարտներով պահանջվում է, որպեսզի մենք պահպանենք էթիկայի կանոնները, և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանն ուղղված ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողությունների վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և արժանահավատ ներկայացման ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունը, ինչը թույլ է տալիս մշակել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, սակայն ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության և տնօրինության կատարած հաշվապահական գնահատականների հիմնավորվածության, ինչպես նաև ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը, 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Աուդիտոր

Մ. Հայրապետյան

30.04.2014թ.

**Հաշվետվություն
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

		(հազար դրամ)
	2013թ.	2012թ.
Տոկոսային և մմանատիպ եկամուտներ	3	668,728
Տոկոսային և մմանատիպ ծախսեր	3	(431,322)
Զուտ տոկոսային և մմանատիպ եկամուտ		237,406
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	109,274
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(52,039)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		57,235
Եկամուտ շահաբաժիններից	5	800
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	6	(11,649)
Այլ գործառնական եկամուտներ	7	46,734
Գործառնական եկամուտներ		330,526
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(114,262)
Այլ գործառնական ծախսեր	9	(8,008)
Շահույթ՝ մինչև հարկումը		208,256
Շահութահարկի գծով ծախս	10	(44,023)
Շահույթ՝ հարկումից հետո		164,233
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ		5 528
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		5 528
Համապարփակ ֆինանսական արդյունք		164,238 83,274

Արամ Մարգարյան
Գլխավոր տնօրեն

Սիրանուշ Խղարյան
Գլխավոր հաշվապահ



30.04.2014թ.

**Հաշվետվություն
Ֆինանսական վիճակի մասին
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

		2013թ.	(հազար դրամ) 2012թ.
Ակտիվներ	Ծան.		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	214,578	98,818
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13	-	105,052
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	14	54,128	21,833
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	15	1,753	29,852
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	16	285,772	146,610
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	17	5,594,108	4,790,128
Հիմնական միջոցներ	18	9,952	9,927
Ոչ նյութական ակտիվներ	19	1,535	2,187
Այլ ակտիվներ	20	22,739	3,811
Ընդամենը՝ ակտիվներ		6,184,565	5,208,218
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21	5,373,036	4,477,139
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22	2,737	706
Այլ պարտավորություններ	23	51,096	12,957
Ընդամենը՝ պարտավորություններ		5,426,869	4,490,802
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	24	267,150	267,150
Էմիսիոն եկամուտ		208,011	208,011
Պահուստներ՝			
Գլխավոր պահուստ		79,670	79,670
Վերագնահատման պահուստներ		533	528
Զբաղիված շահույթ (վնաս)		202,332	162,057
Ընդամենը՝ սեփական կապիտալ		757,696	717,416
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		6,184,565	5,208,218

Արթուր Կոնյալցյան
Գլխավոր տնօրեն



Սիրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

30.04.2014թ.

Հաշվետվություն
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Կանոնադրա կան կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ֆինանսակա ն ակտիվներ վերագնահա տումներ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 01 հունվարի 2012թ. Համապարփակ եկամուտ	267,150	208,011	79,670	-	126,062	680,893
Շահութաբաժիններ	-	-	-	528	82,746	83,274
Մնացորդը 31 դեկտեմբերի 2012թ.	-	-	-	-	(46,751)	(46,751)
Մնացորդը 01 հունվարի 2013թ. Համապարփակ եկամուտ	267,150	208,011	79,670	528	162,057	717,416
Շահութաբաժիններ	-	-	-	5	164,233	164,238
Մնացորդը 31 դեկտեմբերի 2013թ.	-	-	-	-	(123,958)	(123,958)
Մնացորդը 31 դեկտեմբերի 2013թ.	267,150	208,011	79,670	533	202,332	757,696

Արամ Կոյսիսյան
Գլխավոր տնօրեն

Սիրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ



30.04.2014թ.

**Հաշվետվություն
Դրամական միջոցների հոսքերի մասին
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)

	2013թ.	2012թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	593,650	517,421
Վճարված տոկոսներ	(429,049)	(407,071)
Ստացված կոմիսիոն գումարներ	111,698	23,717
Վճարված կոմիսիոն գումարներ	(51,777)	(1,800)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ (վնաս)	20	585
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(60,863)	(42,531)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(35,349)	(42,989)
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	128,330	47,332
Փոխառությունների նվազում (ավելացում)	(24,342)	(6,914)
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)	(123,426)	(40,069)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)	980,394	1,058,297
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	960,956	1,058,646
Վճարված շահութահարկ	(22,065)	(24,920)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	938,891	1,033,726
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)	(723,661)	(792,191)
Բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	107,950	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(5,255)	(2,496)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	800	19,491
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	(620,166)	(775,196)
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Վճարված շահութաբաժիններ	(114,744)	-
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	(85,723)	(267,283)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	-	(43,276)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	(200,467)	(310,559)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,498)	673
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)	115,760	(51,356)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	98,818	150,174
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	214,578	98,818

Արամ Կալֆաջյան
Գլխավոր տնօրեն



Սիրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

30.04.2014թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Իրավական դաշտ

«ԱՐՄԵՆԲՐՈՎ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հիմնական գործունեությունը ներդրումային ծառայությունների մատուցումն է: Ընկերությունը մատուցում է բոլոր տեսակի ներդրումային ծառայությունները, բացի արժեթղթերի փաթեթի կառավարումից:

Ընկերությունը հիմնադրվել է Հայաստանի հանրապետությունում, հանդիսանում է բաց բաժնետիրական ընկերություն: Ընկերությունը իր գործունեությունը իրականացնում է գլխամասային գրասենյակի միջոցով, որի հասցեն է ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 32/1, թիվ 8 տարածք: Նշված հասցեն Ընկերության իրավաբանական հասցեն է: Ընկերության գրանցման համարը և լիցենզիայի համարն է 10:

Ընկերության թողարկած բաժնետոմսերի 50 տոկոսը պատկանում է Իստինվեստոր Ընկերությանը: Վերջինս և Ընկերությունը միասին կազմում են խումբ:

31.12.2013թ-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի քանակը 35 է, որից 1-ը իրավաբանական անձ է, իսկ 34-ը ֆիզիկական: Ընկերության բաժնետերերից միայն 8-ն են ՀՀ ռեզիդենտ:

Ընկերության նշանակալից մասնակիցներն են «Իստինվեստոր» ընկերությունը և Արամ Կայֆաջյանը:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ.

բ) համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

զ) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ համադրելի ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ Ընկերությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառում է հետընթաց, կամ կատարում է իր ֆինանսական հաշվետվությունների հոդվածների հետընթաց վերահաշվարկ, կամ երբ վերադասակարգում է իր ֆինանսական հաշվետվությունների հոդվածները:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում և ներկայացվում են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության ղեկավարությունը իրականացնում է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են անընդհատության հիմունքով, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է ղեկավարության՝ Ընկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք: Երբ այդպիսի գնահատական տալիս ղեկավարությունը տեղյակ է դեպքերին կամ իրադարձություններին վերաբերող էական անորոշություններին, որոնք կարող են նշանակալի

«ԱՐՄԵՆԲՐՈՒՄ» ԲԲԸ

կասկածներ հարուցել Ընկերության՝ անընդհատության հիմունքով շարունակելու կարողության վերաբերյալ, ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում են այդ անորոշությունները: Երբ ֆինանսական հաշվետվությունները չեն պատրաստում անընդհատության հիմունքով, ապա այդ փաստը բացահայտվում է այն հիմունքների հետ միասին, որոնցով պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև բացահայտվում է այն պատճառը, թե ինչու Ընկերությունը չի համարվում անընդհատ գործող:

Ֆինանսական հաշվետվությունները (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության) պատրաստվում են՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը:

Ֆինանսական հաշվետվություններում համանման հոդվածների յուրաքանչյուր էական դաս ներկայացվում է առանձին: Տարբեր բնույթի և գործառնության հոդվածները ներկայացվում են առանձին, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական չեն:

Ակտիվները և պարտավորությունները, ինչպես նաև եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվանցումը պահանջվում կամ թույլատրվում է ՖՀՄՍ-ներով:

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի համադրելի տեղեկատվությունը, եթե ՖՀՄՍ-ներով չի պահանջվում կամ չի թույլատրվում այլ մոտեցում: Համադրելի տեղեկատվությունը ներառվում է նաև պատմողական և նկարագրական տեղեկատվության մեջ, երբ դա տեղին է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները հասկանալու համար:

Ֆինանսական հաշվետվություններում հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը փոփոխելու դեպքում վերադասակարգվում են նաև համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անհրազործելի է: Համադրելի գումարները վերադասակարգելիս բացահայտման ենթակա են՝

ա) վերադասակարգման բնույթը.

բ) վերադասակարգված յուրաքանչյուր հոդվածի կամ հոդվածների դասի գումարը.

գ) վերադասակարգման պատճառը:

Երբ համադրելի գումարների վերադասակարգումն անհրազործելի է, բացահայտվում է՝

ա) գումարները չվերադասակարգելու պատճառը.

բ) այն ճշգրտումների բնույթը, որոնք տեղի կունենային գումարների վերադասակարգումն իրականացնելու դեպքում:

Ֆինանսական հաշվետվություններում պահպանվում է հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ա) պարզ է, որ նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել գործառնությունների բնույթում, կամ ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դասակարգում կլինի ավելի տեղին, կամ

բ) ներկայացման փոփոխությունը պահանջվում է ՖՀՄՍ-ներով:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ դրամով:

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները կլորացվում են հազարների ճշտությամբ:

Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Ժամանակաշրջանի եկամտի և ծախսի բոլոր հոդվածները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե որևէ ՖՀՄՍ այլ բան չի պահանջում կամ թույլատրում:

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փական փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով. և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են (ներկայացվում են) իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ այն փոխարժեքային տարբերությունների, որոնք նշված են ՀՀՄՍ 21-ի 32-րդ պարագրաֆում:

Եթե ոչ դրամային հոդվածի գծով օգուտ կամ վնաս է ճանաչվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում: Եվ հակառակը՝ եթե ոչ դրամային հոդվածի գծով օգուտ կամ վնաս է ճանաչվում շահույթում կամ վնասում, ապա այդ օգուտի կամ վնասի ցանկացած փոխանակման բաղադրիչ ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Ընթացիկ հարկեր

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա հարկի գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Այն հարկային վնասի հետ կապված օգուտը, որը կարելի է տեղափոխել հետ՝ նախորդ ժամանակաշրջանի ընթացիկ հարկը փոխհատուցելու նպատակով, ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի հարկային մարմիններին (կփոխհատուցվի հարկային մարմինների կողմից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

(ա) գուղվիլի սկզբնական ճանաչումից. կամ

(բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը՝

(i) բիզնեսների միավորում չէ. և

(ii) գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Այնուամենայնիվ, այն հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր կազմակերպություններում, մասնաճյուղերում, ասոցիացված կազմակերպություններում ներդրումների և համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է ՀՀՄՍ 12-ի 39-րդ պարագրաֆին համապատասխան:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի գծով ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունը ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը, հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Կետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այնքանով, որքանով հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են սովյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

(ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ

(բ) բիզնեսների միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

(ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,

(բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում:

Հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը կարող են հաշվանցվել այն և միայն այն դեպքում, երբ՝

(ա) առկա է իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց.

(բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

(i) Ընկերությունից. կամ

(ii) Ընկերությունից և այլ հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների նշանակալի գումարների մարում կամ փոխհատուցում:

Ֆինանսական գործիքների ճանաչումը և գնահատումը

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ Հնկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ՝

(ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը. կամ

(բ) Հնկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս՝

(ա) հաշվեկշռային արժեքի և

(բ) (i) ստացված հատուցման (ներառյալ ձեռք բերված որևէ նոր ակտիվ՝ հանած ստանձնած որևէ նոր պարտավորություն) և (ii) այլ համապարփակ եկամտում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի:

Տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) հեռացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից այն ու միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իր իրական արժեքով՝ գումարած (այն դեպքում, երբ դա ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով) գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո չափման նպատակով ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ չորս կատեգորիաների՝

(ա) ֆինանսական ակտիվներ, չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

(բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ.

(գ) փոխառություններ և դեբիտորական պարտքեր.

(դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք այն կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ հետևյալ ֆինանսական ակտիվների՝

(ա) փոխառությունների և դեբիտորական պարտքեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

(բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը.

(գ) բաժնային գործիքների մեջ ներդրումներ, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև ածանցյալ գործիքներ, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ՝

(ա) ֆինանսական պարտավորությունների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այսպիսի պարտավորությունները, ներառյալ պարտավորություն հանդիսացող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն ածանցյալ գործիք հանդիսացող պարտավորությանը, որը կապակցված է և պետք է մարվի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որի իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, և որը չափվում է սկզբնական արժեքով:

(բ) ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի որակվում որպես ապաճանաչման ենթակա, կամ երբ կիրառելի է շարունակվող ներգրավվածության մոտեցումը:

(գ) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի: Սկզբնական ճանաչումից հետո այդպիսի պայմանագիր թողարկողը պետք է (բացի այն դեպքերից, երբ կիրառելի են ՀՀՄՍ 39-ի 47 (ա) կամ (բ) պարագրաֆները) այն չափի հետևյալ երկու գումարներից առավելագույնով:

(i) ՀՀՄՍ 37-ի համաձայն որոշված գումար:

(ii) սկզբնապես ճանաչված գումար՝ հանած, համապատասխան դեպքերում, ՀՀՄՍ 18-ի համաձայն ճանաչված կուտակված ամորտիզացիան:

(դ) շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն տրամադրելու պարտավորվածությունների: Սկզբնական ճանաչումից հետո այսպիսի պարտավորվածություն թողարկողը պետք է (բացի այն դեպքերից, երբ կիրառելի է ՀՀՄՍ 39-ի 47(ա) պարագրաֆը) այն չափի հետևյալ երկու գումարներից առավելագույնով:

(i) ՀՀՄՍ 37-ի համաձայն որոշված գումար:

(ii) սկզբնապես ճանաչված գումար՝ հանած, համապատասխան դեպքերում, ՀՀՄՍ 18-ի համաձայն ճանաչված կուտակված ամորտիզացիան:

Նեջավորման փոխհարաբերության մաս չհանդիսացող ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ:

(ա) որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(բ) որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվի գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ արժեզրկումից կորուստների և արտարժույթի փոխարժեքից առաջացած օգուտների կամ վնասների, քանի դեռ այդ ակտիվը ապաճանաչված չէ: Ապաճանաչման ժամանակ նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է՝ դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում: Այնուամենայնիվ, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքի գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ հաստատվում է վճարը ստանալու իրավունքը:

Ղրամական միջոցներ և դրանց համարժեքներ (բացահայտում են այն քաղաքականությունը, որը կիրառվում է ղրամական միջոցների և դրանց համարժեքների կազմը որոշելիս)

Ընկերության համար ղրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամը, ՀՀ Կենտրոնական բանկում և այլ բանկերում բացված հաշիվներում առկա գումարները, ֆինանսական գործարքներ կատարելու նպատակով այլ ֆինանսական կազմակերպություններում դեպոնացված գումարները, ինչպես նաև կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումները, որոնք հեշտ փոխարկվում են ղրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ են համարվում այն ֆինանսական ակտիվները, որոնք բավարարում են հետևյալ պայմաններից որևէ մեկին.

(ա) դասակարգված են որպես առևտրական նպատակներով պահվող: Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես առևտրական նպատակներով պահվող, եթե այն՝

(i) ձեռք է բերվել կամ ստանձնվել է հիմնականում կարճ ժամանակամիջոցում վաճառելու կամ հետգնելու նպատակով.

(ii) սկզբնական ճանաչման պահին որոշելի, միասին կառավարվող ֆինանսական գործիքների պորտֆելի մի մաս է, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի պատկերի վերաբերյալ. կամ

(iii) ածանցյալ գործիք է (բացառությամբ այնպիսի ածանցյալ գործիքի, որը ֆինանսական երաշխավորության պայմանագիր է կամ նախատեսված և արդյունավետ հեջավորման գործիք).

(բ) սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: այդպիսի նախատեսումը կարող է օգտագործվել, միայն երբ դա թույլատրված է ՀՀՄՍ 39-ի 11Ա պարագրաֆով, կամ երբ դա հանգեցնում է ավելի տեղին տեղեկատվության, քանի որ՝

(i) այն վերացնում կամ էապես նվազեցնում է չափման կամ ճանաչման անհետևողականությունը, որը այլապես կառաջանար ակտիվները տարբեր հիմունքներով չափելու կամ դրանց գծով օգուտները և վնասները տարբեր հիմունքներով ճանաչելու արդյունքում. կամ

(ii) ֆինանսական ակտիվների խումբը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով՝ ռիսկերի կառավարման կամ ներդրումային փաստաթղթավորված ռազմավարության համաձայն, և այդ խմբի վերաբերյալ ներքին տեղեկատվությունը՝ նույնպես իրական արժեքի հիմունքով, տրամադրվում է Ընկերության գլխավոր տնօրենին:

Ներդրումներն այն բաժնային գործիքներում, որոնք ակտիվ շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավաստորեն չափվել, չեն նախատեսվում որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով:

Սկզբնական ճանաչումից հետո շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք այն կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ:

որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք կազմակերպության կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես (ա) փոխառություններ և դեբիտորական պարտքեր, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, կամ (գ) Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահին այն չափվում է իր իրական արժեքով՝ գումարած՝ գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները, չափվում են իրենց իրական արժեքներով՝ առանց կատարելու որևէ նվազեցում գործարքի հետ կապված այն ծախսումների գծով, որոնք այն կարող է կրել վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ, բացառությամբ բաժնային գործիքների մեջ ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև ածանցյալ գործիքների, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվի գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ արժեզրկումից կորուստների և արտարժույթի փոխարժեքից առաջացած օգուտների կամ վնասների, քանի դեռ այդ ակտիվը ապաճանաչված չէ: Ապաճանաչման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է դուրս բերվելով սեփական կապիտալից և ներառվելով շահույթում կամ վնասում որպես վերադասակարգման ճշգրտում: Այնուամենայնիվ, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի բաժնային գործիքի գծով շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ հաստատվում է վճարը ստանալու կազմակերպության իրավունքը:

Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Ռեպո համաձայնագրով վաճառված ֆինանսական գործիքները չեն ապաճանաչվում, քանի որ Ընկերությունը պահպանում է փոխանցված ֆինանսական գործիքների սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

Ռեպո համաձայնագրով ձեռք բերված ֆինանսական գործիքների հաշվառումն իրականացվում է հետհաշվեկշռային հաշիվներով և դրանք չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ռեպո համաձայնագրով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ:

Ռեպո համաձայնագրով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

Փոխառություններ՝ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների՝

(ա) որոնք Ընկերությունը մտադիր է անմիջապես կամ մոտ ապագայում վաճառել, որոնք պետք է դասակարգվեն որպես առևտրական նպատակներով պահվող, և նրանց, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

(բ) որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես վաճառքի համար մատչելի: կամ

(գ) որոնց գծով Ընկերությունը կարող է չփոխհատուցել ըստ էության իր ողջ սկզբնական ներդրումը այլ պատճառով, քան պարտքային դիրքի վատթարացումը, որի դեպքում ակտիվները պետք է դասակարգվեն որպես վաճառքի համար մատչելի:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր չներկայացնող ակտիվների խմբում ձեռք բերված մասնակցությունը (օրինակ՝ փոխադարձ ֆոնդերում կամ այլ նման ֆոնդերում մասնակցությունը) փոխառություն կամ դեբիտորական պարտք չէ:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ փոխառությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում, ինչպես նաև՝ ամորտիզացիայի միջոցով: Այնուամենայնիվ, այն փոխառությունների դեպքում, որոնք հեջավորված հոդվածներ են, օգուտի կամ վնասի հաշվառումը կատարվում է ՀՀՄՍ 39-ի 89-102-րդ պարագրաֆների համաձայն:

Փոխառությունների ու դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով կորուստների որոշման և անհուսալի փոխառությունների ու դեբիտորական պարտքերի դուրսգրման հիմունքը

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Ակտիվի հաշվեկշռային արժեքը կարող է նվազեցվել կամ ուղղակիորեն, կամ օգտագործելով կարգավորող հաշիվը: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և նվազումը կարելի է անկողմնակալ ձևով կապել մի դեպքի հետ, որը տեղի է ունեցել արժեզրկումը ճանաչելուց հետո (ինչպիսին է, օրինակ, պարտապանի պարտքային վարկանիշի բարելավումը), ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է կամ ուղղակիորեն, կամ կարգավորող հաշիվը ճշգրտելու միջոցով: Հակադարձումը չպետք է հանգեցնի այն բանին, որ ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը առկա կլիներ արժեզրկման հակադարձման ամսաթվի դրությամբ, եթե արժեզրկումը ճանաչված չլիներ: Հակադարձման գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Տոկոսների հաշվեգրման դադարեցումը

Այլ անձանց կողմից կազմակերպության ակտիվներն օգտագործելիս առաջացող հասույթները՝ տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են հետևյալ հիմունքներով՝

ա) տոկոսը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը, ինչպես ներկայացված է ՀՀՄՍ 39-ի 9-րդ և ԿՈՒ5-ԿՈՒ8 պարագրաֆներում:

բ) ռոյալթիները ճանաչվում են հաշվեգրման հիմունքով՝ համապատասխան համաձայնագրի բովանդակության համաձայն:

գ) շահաբաժինները ճանաչվում են, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսներ, ռոյալթիներ և շահաբաժիններ, ճանաչվում են, երբ՝

ա) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Արմենբրոկ,

բ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթների գումարը:

Տոկոսների հաշվեգրումը դադարեցվում է, երբ հայտնի է դառնում, որ բավարարված չէ վերոնշյալ պայմաններից թեկուզ և մեկը:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հաշվառումը

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ են ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք Շնկերությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ՝

(ա) նրանց, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսվել են որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով.

(բ) նրանց, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի.

(գ) նրանց, որոնք բավարարում են փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Որևէ ֆինանսական ակտիվ չի դասակարգվում որպես մինչև մարումը պահվող, եթե ընթացիկ ֆինանսական տարվա կամ նախորդ երկու ֆինանսական տարիների ընթացքում Շնկերությունը մինչև մարման ժամկետը լրանալը վաճառել կամ վերադասակարգել է մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նշանակալի մասը (նշանակալի՝ համեմատած մինչև մարումը պահվող ներդրումների ողջ գումարի հետ), բացառությամբ այնպիսի վաճառքի կամ վերադասակարգումների, որոնք՝

(i) տեղի են ունենում մարման ժամկետին կամ ֆինանսական ակտիվի հետգնման իրավունքի իրագործման ամսաթվին այնքան մոտ (օրինակ՝ մարման ժամկետից երեք ամիս կամ ավելի պակաս առաջ), որ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունները նշանակալի ազդեցություն չէին ունենա ֆինանսական ակտիվների իրական արժեքի վրա.

(ii) տեղի են ունենում այն բանից հետո, երբ Շնկերությունն արդեն ստացել է ֆինանսական ակտիվների ըստ էության ամբողջ սկզբնական հիմնական գումարը՝ սահմանված վճարումների ժամանակացույցի կամ վաղաժամկետ վճարումների միջոցով. Կամ,

(iii) վերագրելի են առանձին բացառիկ դեպքի, որը Շնկերության հսկողությունից դուրս է, և որը չէր կարող խելամտորեն կանխատեսվել:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած՝ գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Սկզբնական ճանաչումից հետո մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների գծով օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում, ինչպես նաև՝ ամորտիզացիայի միջոցով: Այնուամենայնիվ, այն ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների դեպքում, որոնք հեջավորված հոդվածներ են, օգուտի կամ վնասի հաշվառումը կատարվում է ՀՀՄՍ 39-ի 89-102-րդ պարագրաֆների համաձայն:

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ,

Հիմնական միջոցները

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Շնկերություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, ճանաչման պահին չափվում է իր սկզբնական արժեքով:

Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է՝

ա) գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները.

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում:

գ) հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը, որոնց գծով կազմակերպության պարտականությունը առաջանում է ձեռքբերման ժամանակ:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Հիմնական միջոցի մաշվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է դրա օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի համար, որի արժեքը նշանակալի է միավորի ընդհանուր արժեքի նկատմամբ, մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցի մնացորդային արժեքը և օգտակար ծառայությունը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ, և եթե ակնկալիքները տարբերվում են նախորդ գնահատումներից, փոփոխությունները հաշվառվում են որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում:

Մաշվածության հաշվարկման համար կիրառվում է այնպիսի մեթոդ, որը արտացոլում է այն մոդելը, որով Ընկերությունն ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները:

Ակտիվի համար կիրառվող մաշվածության հաշվարկման մեթոդը առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարեվերջի դրությամբ վերանայվում է և, եթե այդ ակտիվներից սպասվող տնտեսական օգուտների ստացման ակնկալվող մոդելի մեջ տեղի է ունեցել նշանակալի փոփոխություն, ապա մեթոդը փոխվում է՝ փոփոխված մոդելն արտացոլելու նպատակով: Այդ փոփոխությունը հաշվառվում է որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում:

Որոշելու համար, թե արդյոք հիմնական միջոցի միավորն արժեզրկված է, թե ոչ, կիրառվում է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության 18-րդ կետը և ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտը:

Արժեզրկված, կորած կամ փոխանցված հիմնական միջոցների միավորների գծով երրորդ կողմերից փոխհատուցումը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ այդ փոխհատուցումը դառնում է ստացման ենթակա:

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորը ապաճանաչվում է (բացառությամբ երբ ՀՀՄՍ 17-ով պահանջվում է այլ բան՝ հետադարձ վարձակալությամբ վաճառքի դեպքում):

Հիմնական միջոցների միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Օգուտը չի դասակարգվում որպես հասույթ:

Ոչ նյութական ակտիվները

Ընկերության համար ոչ նյութական ակտիվ է համարվում որոշելի ոչ դրամային ակտիվը, որը չունի ֆիզիկական սուբստանցիա:

Ակտիվը որոշելի է, եթե այն՝

(ա) առանձնացվելի է, այսինքն՝ եթե կարող է առանձնացվել կամ բաժանվել Ընկերությունից և վաճառվել, փոխանցվել, տրամադրվել լիցենզիայով, տրվել վարձակալությամբ կամ փոխանակվել անհատապես կամ հարակից պայմանագրի, որոշելի ակտիվի կամ պարտավորության հետ միասին՝ անկախ նրանից, թե արդյոք Ընկերությունը մտադրություն ունի այդպես վարվելու. կամ

«ԱՐՄԵՆԲՐՈՒՄ» ԲԲԸ

(բ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից՝ անկախ նրանից, թե արդյոք այդ իրավունքները փոխանցելի են կամ առանձնացվելի են Ընկերությունից կամ այլ իրավունքներից ու պարտականություններից:

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միմիայն այն դեպքում, երբ՝

(ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն:

(բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ակնկալվող ապագա տնտեսական օգուտների հավանականության գնահատումը իրականացվում է օգտագործելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են դեկավարության՝ այն տնտեսական պայմանների ամբողջական կազմի լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով:

Ներստեղծված գույքի վրա չի ճանաչվում որպես ակտիվ:

Հետազոտությունից (կամ ներքին նախագծի հետազոտության փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվները չեն ճանաչվում: Հետազոտության (կամ ներքին նախագծի հետազոտության փուլի) ծախսումները ճանաչվում են որպես ծախս՝ դրանց տեղի ունենալու պահին:

Մշակումից (կամ ներքին նախագծի մշակման փուլից) առաջացող ոչ նյութական ակտիվը ճանաչվում է միմիայն այն դեպքում, երբ հնարավոր է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ՝

(ա) ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար:

(բ) ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու մտադրությունը:

(գ) ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու կարողությունը:

(դ) այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ: Ի թիվս այլոց, պետք է ցուցադրվի ոչ նյութական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ նյութական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործվելու է կազմակերպության ներսում, ապա ոչ նյութական ակտիվի օգտակարությունը:

(ե) մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրաժեշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը:

(զ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու կարողությունը:

Ներստեղծված ապրանքանիշերը, խորագրերը, հրապարակումների անվանումները, հաճախորդների ցուցակները և այլ էությամբ նմանատիպ միավորները չեն ճանաչվում որպես ոչ նյութական ակտիվներ:

Ոչ նյութական միավորի գծով ծախսումները ճանաչվում են որպես ծախս, երբ դրանք տեղի են ունենում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ.

(ա) դրանք կազմում են ոչ նյութական ակտիվի ճանաչման սահմանված չափանիշները բավարարող սկզբնական արժեքի մաս կամ

(բ) միավորը ձեռք է բերվում ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում և չի կարող ճանաչվել որպես ոչ նյութական ակտիվ: Այդպիսի դեպքում նշված ծախսումները կազմում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ գույքի վրա ճանաչված գումարի մաս:

Ոչ նյութական միավորի գծով ծախսումները, որոնք սկզբնապես ճանաչվել են որպես ծախս, ավելի ուշ ամսաթվով չեն ճանաչվում որպես ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքի մաս:

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը հաշվառվում է իր սկզբնական արժեքով՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստներ:

Արմենբրոկը որոշում է, թե արդյոք ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը որոշակի է, թե անորոշ, իսկ որոշակի լինելու դեպքում որոշում է նաև այդ օգտակար ծառայության

տնտեսությունը կամ օգտակար ծառայությունը ներկայացնող արտադրանքի կամ նմանատիպ միավորների քանակը: Ոչ նյութական ակտիվը դիտարկվում է որպես անորոշ օգտակար ծառայություն ունեցող, երբ բոլոր առնչվող գործոնների վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ չկա որևէ կանխատեսելի սահմանափակում այն ժամանակահատվածի, որի ընթացքում այդ ակտիվից ակնկալվում է գույտ դրամական ներհոսք դեպի Ընկերություն:

Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը, որը բխում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից, չպետք է գերազանցի պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքների ժամկետը, սակայն կարող է լինել ավելի կարճ՝ կախված այն ժամանակահատվածից, որի ընթացքում ենթադրվում է օգտագործել տվյալ ակտիվը: Եթե պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքները փոխանցվում են սահմանափակ ժամկետով, որը կարող է նորացվել, ապա ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը ներառում է նորացման ժամանակահատվածը (ժամանակահատվածները) միայն այն դեպքում, երբ առկա է նորացումն առանց էական ծախսումների իրականացնելու ապացույցը:

Օգտակար ծառայության որոշակի ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերաբար բաշխվում է դրա օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ գտնվում է այն վայրում և այն վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն կարողանա գործել դեկավարության կողմից նախատեսված ձևով: Ամորտիզացիայի հաշվարկումը դադարեցվում է, երբ տվյալ ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող (կամ ներառվում է օտարվող ակտիվների այն խմբում, որը դասակարգված է որպես վաճառքի համար պահվող), կամ, երբ այդ ակտիվն ապաճանաչվում է՝ նայած, թե այդ ամսաթվերից որն ավելի շուտ կլինի: Ամորտիզացիայի կիրառվող մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, ըստ որի՝ ակնկալվում է, որ ակտիվից ստացվող ապագա տնտեսական օգուտները կսպառվեն կազմակերպության կողմից: Եթե այդ մոդելը հնարավոր չէ արժանահավատորեն որոշել, ապա կիրառվում է գծային մեթոդը: Յուրաքանչյուր ժամանակահատվածի համար հաշվարկված ամորտիզացիայի ծախսումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե միայն որևէ ստանդարտով չի թույլատրվում կամ պահանջվում, որ այն ներառվի մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Օգտակար ծառայության որոշակի ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը համարվում է զրո, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

(ա) առկա է երրորդ կողմի պարտավորվածություն՝ գնելու այդ ակտիվը օգտակար ծառայության ավարտին. կամ

(բ) ակտիվի համար գոյություն ունի գործող շուկա և

(i) մնացորդային արժեքը կարող է որոշվել՝ վկայակոչելով այդ շուկան.

(ii) հավանական է, որ այդպիսի շուկա գոյություն կունենա տվյալ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի վերջում:

Որոշակի օգտակար ծառայություն ունեցող ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի ժամանակաշրջանը և ամորտիզացիայի մեթոդը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում: Եթե ակտիվի ակնկալվող օգտակար ծառայությունը տարբերվում է նախորդ գնահատումներից, ապա ամորտիզացիայի ժամանակաշրջանը համապատասխանաբար փոփոխվում է: Եթե ակտիվից առաջացող և դրանում մարմնավորված տնտեսական օգուտների սպառման ակնկալվող մոդելում փոփոխություն է տեղի ունեցել, ապա ամորտիզացիայի մեթոդը փոփոխվում է այնպես, որ արտացոլի այդ փոփոխությունները: Այդպիսի փոփոխությունները հաշվառվում են որպես հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվը ամորտիզացիայի ենթակա չէ:

Ամորտիզացիայի չենթարկվող ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայությունը յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերանայվում է՝ պարզելու համար, թե արդյոք իրադարձություններն ու հանգամանքները շարունակում են հիմնավորել անորոշ ժամկետով օգտակար ծառայության գնահատումը տվյալ ակտիվի համար: Եթե դա այդպես չէ, ապա

«ԱՐՄԵՆԲՐՈՒ» ԲԲԸ

օգտակար ծառայության գնահատման փոփոխությունը անորոշ ժամկետից դեպի որոշակի ժամկետ հաշվառվում է որպես հաշվապահական հաշվառման գնահատումի փոփոխություն:

Որոշելու համար, թե արդյոք ոչ նյութական ակտիվն արժեզրկված է, թե ոչ, կիրառվում է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության 18-րդ կետը և ՀՀՄՍ 36-ը:

Ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է՝

(ա) օտարման պահին. կամ

(բ) երբ դրա օգտագործումից կամ հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ:

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից զուտ ներհոսքի, եթե կա այդպիսին, և տվյալ ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում ակտիվի ապաճանաչման պահին (եթե ՀՀՄՍ 17-ը այլ բան չի պահանջում վաճառքի և հետվարձակալման դեպքում): Օգուտը չի դասակարգվում որպես հասույթ:

Հաճախորդների միջոցներ,

Եթե Ընկերությունը չունի հաճախորդի միջոցները ի շահ իրեն օգտագործելու պայմանագրով նախատեսված իրավունք, ապա հաճախորդի միջոցների հաշվառումը տարվում է հետհաշվեկշռային հոդվածներով և այդ միջոցները չեն ներառվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Եթե Ընկերությունն ունի հաճախորդի միջոցները ի շահ իրեն օգտագործելու պայմանագրով նախատեսված իրավունք, ապա այդ միջոցները դիտարկվում են որպես ֆինանսական ակտիվներ և դրանց նկատմամբ կիրառվում է ֆինանսական ակտիվների հաշվառման քաղաքականությունը:

Տարբերակումն այն գործառնությունների և իրադարձությունների, որոնք հանգեցնում են հաշվեկշռում ակտիվների և պարտավորությունների ճանաչմանը, այն գործառնություններից և իրադարձություններից, որոնք առաջացնում են միայն պայմանական դեպքեր և պայմանավորվածություններ,

Ընկերության համար պայմանական պարտավորություն է համարվում.

ա) հնարավոր պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից. կամ

բ) ներկա պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, սակայն, չի ճանաչվում հետևյալ պատճառներով՝

i. հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. կամ

ii. պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Ընկերության համար պայմանական ակտիվ է համարվում. հնարավոր ակտիվը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում Ընկերության կողմից:

Պայմանական ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում:

Ընդհանուր գործունեության ռիսկերի դիմաց կատարվող հատկացումների որոշման և դրանց հաշվապահական ձևակերպման հիմունքը,

Ընկերության համար պահուստ է համարվում անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն:

Պահուստը ճանաչվում է, երբ՝

ա) Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք. և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Հազվադեպ դեպքերում կարող է հստակ չլինել, թե արդյոք գոյություն ունի ներկա պարտականություն: Այս դեպքերում համարվում է, որ անցյալ դեպքը հանգեցրել է ներկա պարտականության, եթե, հաշվի առնելով հասանելի բոլոր վկայությունները, ավելի շատ հավանական է, քան ոչ, որ ներկա պարտականությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գոյություն ունի:

Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար հաշվի են առնվում այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և հանգամանքներում:

Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Որպես գեղջման դրույք վերցվում է այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղջման դրույքը չպետք է արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, արտացոլվում են պահուստի գումարում, երբ բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալու:

Ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները հաշվի չեն առնվում պահուստը չափելիս:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի: Փոխհատուցումը դիտվում է որպես առանձին ակտիվ: Փոխհատուցման գծով ճանաչված գումարը չպետք է գերազանցի պահուստի գումարը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պահուստին վերաբերող ծախսը կարող է ներկայացվել զուտ հիմունքով՝ հանելով փոխհատուցման գծով ճանաչված գումարը:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Ապագա գործառնական վնասների համար պահուստներ չեն ճանաչվում:

Եթե Ընկերությունն ունի անբարենպաստ պայմանագիր, ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը ճանաչվում և չափվում է որպես պահուստ:

Վերակազմավորման գծով պահուստը պետք է ներառի միայն ուղղակիորեն վերակազմավորումից առաջացող ծախսումները, որոնք՝

ա) անպայմանորեն հետևանք են վերակազմավորման.

բ) կապված չեն Ընկերության անընդհատ գործունեության հետ:

23) կապիտալ և էմիսիոն եկամուտ,

Ընկերության կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության թողարկված բաժնետոմսերի քանակի և մեկ բաժնետոմսի անվանական արժեքի արտադրյալը:

Թողարկված բաժնետոմսերի իրացման արդյունքում ստացված գումարների իրական արժեքի և բաժնետոմսերի անվանական արժեքի դրական տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը,

Մի քանի փոխանակման փոխարժեքի առկայության դեպքում օգտագործվում է այն փոխարժեքը, որով տվյալ գործառնությունից բխող դրամական հոսքերը կամ հաշիվների մնացորդները կարող էին կարգավորվել (մարվել), եթե այդ դրամական միջոցների հոսքերը տեղի ունենային չափման ամսաթվի դրությամբ: Եթե երկու արժույթների միջև փոխանակման հնարավորությունը ժամանակավորապես անհնարին է, օգտագործվում է առաջին հաջորդող փոխարժեքը, որը կկիրառվեր հնարավոր փոխանակման դեպքում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը,

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է զուտ գումարը այն և միայն այն դեպքում, երբ Հնկերությունը.

(ա) տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք.

(բ) մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման չափանիշների, փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չեն հաշվանցվում:

3. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ/(ծախսեր)

(հազար դրամ)

Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ներդրված ավանդներից

2013թ. 2012թ.

Տոկոսային եկամուտներ արժեթղթերից

13,185 11,849

Տոկոսային եկամուտներ փոխառություններից

654,541 542,826

Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից

1,002 2,028

- 682

668,728 557,385

Տոկոսային և նմանատիպ ծախսեր

Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց

(5,665) (10,284)

Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի գծով

(425,657) (397,023)

(431,322) (407,307)

Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ

237,406 150,078

4. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

(հազար դրամ)

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

Արժեթղթերով գործարքների միջնորդավճարներից

19,781 6,688

Խորհրդատվական ծառայությունների գծով միջնորդավճարներից

4,580 4,975

Պահառության գործունեությունից

- 20

Այլ միջնորդավճարներ

84,913 22

109,274 11,705

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր

Միջնորդավճարների գծով ծախսեր

(52,039) (1,800)

(52,039) (1,800)

Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ

57,235 9,905

5. Եկամուտ շահութաբաժիններից

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Սովորական բաժնետոմսերի գծով	800	491
	800	491

6. Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Առևտրական նպատակներով պահվող ներդրումներից զուտ եկամուտներ		
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների առքուվաճառքից զուտ եկամուտ	140	(875)
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	6,106	6,277
	6,246	5,402
Վաճառքի համար մատչելի ներդրումներից զուտ եկամուտներ		
Վաճառքի համար մատչելի ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	(2)	(5,719)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	(18,713)	(479)
	(18,715)	(6,198)
Արտարժույթային գործառնություններից զուտ եկամուտներ		
Արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտ	71	664
Արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտ	749	(4,278)
	820	(3,614)
Ընդամենը զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	(11,649)	(4,410)

7. Այլ գործառնական եկամուտներ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Մինչև մարման ժամկետ պահվող ներդրումների օտարումից զուտ եկամուտ	44,344	19,000
Այլ գործառնական եկամուտներ	2,390	17,442
	46,734	36,442

8. Ընդհանուր վարչական ծախսեր

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	81,122	51,154
Ծախսեր սոցիալական ապահովության վճարների գծով	-	5,002
Գործուղման և ուսուցման գծով ծախսեր	1,173	-
Անձնակազմի այլ ծախսեր	176	913
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	15,360	14,000
Ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և պահպանման գծով ծախսեր	569	-
Առևտրի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	2,950	950
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	1,933	2,437
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	3,476	2,718
Այլ վարչական ծախսեր	7,503	6,165
	114,262	83,339

Աշխատակիցների միջին թվաքանակը 23 մարտի Է: Մեկ աշխատողին բաժին ընկնող միջին ամսական աշխատավարձի չափը 296,000 դրամ է:

9. Այլ գործառնական ծախսեր

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Հասարակական կապերի գծով ծախսեր	1,325	810
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	5,231	4,723
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	652	652
Այլ ծախսեր	800	-
	8,008	6,185

10. Շահութահարկի գծով ծախս

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	44,023	20,236
	44,023	20,236

11. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթ հարկումից հետո	164,233	82,746
Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթ	164,233	82,746
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թիվը	267,150	267,150
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	0.61	0.31
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	0.61	0.31

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Կանխիկ դրամական միջոցներ	4,541	4,081
Ընթացիկ հաշիվներ բանկերում	210,037	94,737
	214,578	98,818

13. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Տրամադրված փոխառություններ և ավանդներ	-	104,931
Հաշվեգրված տոկոսներ	-	121
	-	105,052

14. Պահանջներ հաճախորդների նկատմամբ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Տրամադրված փոխառություններ աշխատակիցներին և կապված անձանց (տես ծանոթագրություն 25)	40,116	15,774
Նշված փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ	452	459
Դերիտորական պարտքեր առևտրային գործառնությունների գծով	13,560	5,600
	54,128	21,833

Հաճախորդների նկատմամբ պահանջների աշխարհագրական վերլուծությունը:

	2013թ.	Տոկոսային հարաբերությունը	2012թ.	Տոկոսային հարաբերությունը
Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներ	52,683	98%	21,374	100%
ԲԲԸ-/Բաա3/ և բարձր վարկանիշ ունեցող երկրների ռեզիդենտներ	993	2.0%	-	-
Հաշվեգրված տոկոսներ	452		459	
	54,128		21,833	

15. Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

	(հազար դրամ)			
	2013թ.		2012թ.	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր ԲԲԸ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի բաժնային գործիքներ	1,753	-	29,852	-
	1,753		29,852	

16. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	(հազար դրամ)			
	2013թ.		2012թ.	
	ցուցակված	չցուցակված	ցուցակված	չցուցակված
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր Ա-/Ա3/ և բարձր վարկանիշ ունեցող թողարկողի Երկարաժամկետ պարտքային գործիքներ	-	200,425	-	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Գ -» և բարձր վարկանիշ ստացած թողարկողի Երկարաժամկետ պարտքային գործիքներ	4,106	-	-	-
Բաժնային գործիքներ	2,560	-	2,560	-
ԲԲԸ+/Բաա1/ և ցածր վարկանիշ ունեցող, այլ վարկանիշ ունեցող և վարկանիշ չունեցող թողարկողի Երկարաժամկետ պարտքային գործիքներ	35,411	-	-	40,637
Կարճաժամկետ պարտքային գործիքներ	-	-	41,435	-
Բաժնային գործիքներ	621	42,649	306	61,672
	42,698	243,074	44,301	102,309
	285,772		146,610	

17. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

	(հազար դրամ)	
	2013թ.	2012թ.
Պետական արժեթղթեր		
Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսեր	5,287,377	4,515,769
Հաշվեգրված տոկոսներ	186,783	157,226
	5,474,160	4,672,995
Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր*		
Չցուցակված թողարկողի պարտատոմսեր	96,000	96,000
Հաշվեգրված տոկոսներ	23,948	21,133
	119,948	117,133
	5,594,108	4,790,128

* Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթերը Մոնարխ Կապիտալ ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսեր են: 31.12.2013թ. դրությամբ Մոնարխ Կապիտալ ԲԲԸ-ն գտնվում է սնանկության գործընթացում: Սակայն Ընկերության ղեկավարությունը չի արժեգրվել վերը նշված պարտատոմսերի և դրանց գծով հաշվեգրված տոկոսների գումարները, քանի որ դրանք ապահովված են շարժական գույքի գրավով, որոնց լիկվիդացիոն արժեքը 26.04.2014թ. դրությամբ գերազանցում է տվյալ պարտատոմսերի և դրանց գծով հաշվեգրված տոկոսների գումարների հաշվեկշռային արժեքը:

«Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների» դասում հաշվառվող ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթերի արժեքը 4,849,791.0 հազ. դրամ է, որոնք կնքվել են ՀՀ բանկերի հետ:

18. Հիմնական միջոցներ

	(հազար դրամ)			
	Համակարգիչներ և կապի միջոցներ	Փոխադրաիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011	11,899	12,872	7,144	31,915
Ավելացում	2,068	-	128	2,196
Օտարում	(2,270)	-	(289)	(2,559)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	11,697	12,872	6,983	31,552
Ավելացում	2,746	-	2,509	5,255
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	14,443	12,872	9,492	36,807
Կուտակված մաշվածություն				
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011	10,460	3,432	5,568	19,460
Ավելացում	1,246	2,574	904	4,724
Օտարում	(2,270)	-	(289)	(2,559)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	9,436	6,006	6,183	21,625
Ավելացում	2,088	2,575	567	5,230
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	11,524	8,581	6,750	26,855
Հաշվեկշռային արժեք				
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	2,919	4,291	2,742	9,952
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	2,261	6,866	800	9,927

19. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	(հազար դրամ) Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2011	5,845	222	6,067
Ավելացում	300	-	300
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	6,145	222	6,367
Ավելացում	-	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	6,145	222	6,367
Կուտակված ամորտիզացիա			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	3,306	222	3,528
Ավելացում	652	-	652
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	3,958	222	4,180
Ավելացում	652	-	652
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	4,610	222	4,832
Հաշվեկշռային արժեք			
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2013	1,535	-	1,535
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2012	2,187	-	2,187

20. Այլ ակտիվներ

	2013թ.	2012թ.
Կանխավճարներ մատակարարներին	324	115
Կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով	17,100	270
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	5,315	3,426
	22,739	3,811

21. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2013թ.	2012թ.
Հայաստանի Հանրապետության բանկեր	5,361,799	4,468,174
Ռեպո համաձայնագրեր - Հայաստանի Հանրապետության բանկեր	5,361,799	4,381,404
Այլ	-	86,770
Հաշվեգրված տոկոսներ	11,237	8,965
	5,373,036	4,477,139

22. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	2013թ.	2012թ.
Ռեզիդենտ իրավաբանական անձանց, հիմնարկների նկատմամբ	2,737	706
	2,737	706

23. Այլ պարտավորություններ

	2013թ.	(հազար դրամ) 2012թ.
Շահութահարկի գծով	44,023	5,859
Այլ հարկերի ու տուրքերի գծով	1,852	5,688
Սոցիալական ապահովագրության վճարումների գծով	-	975
Կրեդիտորական պարտքեր մատակարարների նկատմամբ	5,221	435
	51,096	12,957

24. Կանոնադրական կապիտալ

Ներդրումային ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում է 267,150.0 հազ. ՀՀ դրամ:

Ներդրումային ընկերության թողարկված և տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի քանակը 267,150 հատ է, յուրաքանչյուրը 1.0 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներդրումային ընկերության նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ.

Նշանակալից մասնակցի անունը, ազգանունը/անվանումը	Մասնակցության գումարը	Մասնակցության չափը տոկոսային հարաբերությամբ	Մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական և անհատ)
Իստ Ինվեստոր ԼՏԴ	133 576 000	50.00%	ներդրումներ
Արամ Կալիաշյան	52 575 000	19.68%	

25. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերությունը հաշվետու եռամսյակում ղեկավարներին տրամադրել է փոխառություններ, որոնք իրականացվել են շուկայում գործող պայմաններով, 12% տարեկան տոկոսադրույքով: Ստորև ներկայացվում է կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների մնացորդները և ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը.

	2013թ.	2012թ.
Տրամադրված փոխառություններ ղեկավար անձնակազմին (այդ թվում հաշվեգրված տոկոսներ)	26,935	14,582
Ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրություն (ծանոթագրություն 8)	33,247	23,797

26. Ֆինանսական ռիսկեր

Ընկերության գործունեությունն առնչվում է հետևյալ ֆինանսական ռիսկերի հետ:

- Վարկային (պարտքային) ռիսկ,
- Շուկայական ռիսկ.
 - Գնային ռիսկ,
 - Տոկոսային ռիսկ,
 - Արժույթային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ:

Վարկային ռիսկ:

Վարկային ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,

Վարկային ռիսկը հաշվարկելիս հաշվի են առնվում ներդրումային ընկերության ակտիվները:

Վարկային ռիսկը հաշվարկելիս՝ Ընկերության ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները ծախսերի հաշվին ձևավորված իրենց համապատասխան հնարավոր կորուստների պահուստի գումարների չափով նվազեցվելուց հետո կշռվում են համապատասխան ռիսկի կշիռներով:

Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$V_R = (V_{R1} + V_{R2} + \dots + V_{RN}) / N$, որտեղ՝

V_R – վարկային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

$V_{R1}, V_{R2}, \dots, V_{RN}$ – վարկային ռիսկն է՝ ըստ օրերի,

N – հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Յուրաքանչյուր օրվա վարկային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$V_{Ri} = (U1 - \eta 1) * R1 + (U2 - \eta 2) * R2 + \dots + (UN - \eta N) * RN$, Որտեղ՝

$U1, U2, \dots, UN$ -ը Ընկերության ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք պակասեցվում են հիմնական կապիտալից), հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների,

$\eta 1, \eta 2, \dots, \eta N$ -ը համապատասխան ակտիվների, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների և հետ հաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների գծով հնարավոր կորուստների պահուստների հանրագումարն են՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների,

$R1, R2, \dots, RN$ -ը համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են:

2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության վարկային ռիսկի մակարդակը կազմում է 310,666.0 հազ. ՀՀ դրամ, իսկ 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 367,390.0 հազ. ՀՀ դրամ:

Վարկային ռիսկի վերլուծություն:

1) յուրաքանչյուր դասի ֆինանսական գործիքների գծով առկա վարկային ռիսկի առավելագույն չափը՝ հանելով արժեզրկման պահուստները, առանց հաշվի առնելու այդ ակտիվների ապահովվածությունը և վարկային ռիսկը նվազեցնող գործիքները, որոնց նկարագրությունը տրվում է առանձին,

2) այն ֆինանսական ակտիվների վարկային որակը, որոնք ստանդարտ են (օրինակ՝ նրանց վերլուծությունն ըստ վարկանիշների կամ վարկային ռիսկի խմբերի).

3) վարկային ռիսկի նվազեցման գործիքների, այդ թվում՝ ապահովության նկարագրությունը, բնույթը և իրական արժեքը,

4) ստացված ապահովվածությունը, որը վերահսկվում է ներդրումային ընկերության կողմից,

5) այն ֆինանսական ակտիվները, որոնք ժամկետանց են, սակայն արժեզրկված չեն,

6) վարկային ռիսկի բոլոր կենտրոնացումները (օրինակ՝ ըստ արժույթի, գործընկերոջ, այլ), և ինչպես է ղեկավարությունը որոշում այդպիսի ռիսկերի կենտրոնացումները:

Աշխարհագրական կենտրոնացումներ

Ներդրումային ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումների վերլուծությունը ներկայացվում է սույն աղյուսակով նախատեսված տեսքով.

2013թ.

(հազար դրամ)

	Հայաստանի Հանրապետությո ւն	Անկախ պետությունների համագործակցությ անք	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում	4,541	-	-	4,541
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	210,037	-	-	210,037
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	1,753	-	-	1,753
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	53,135	-	993	54,128
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	285,772	-	-	285,772
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	5,594,108	-	-	5,594,108
Այլ ակտիվներ	17,575	5,164	-	22,739
Ընդամենը ակտիվներ	6,166,921	5,164	993	6,173,078
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,373,036	-	-	5,373,036
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,737	-	-	2,737
Այլ պարտավորություններ	51,096	-	-	51,096
Ընդամենը պարտավորություններ	5,426,869	-	-	5,426,869
Զուտ դիրք	740,052	5,164	993	746,209

2012թ.

(հազար դրամ)

	Հայաստանի Հանրապետությո ւն	Անկախ պետությունների համագործակցությ անք	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ Կենտրոնական բանկում	4,081	-	-	4,081
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	199,789	-	-	199,789
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	29,852	-	-	29,852
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	21,833	-	-	21,833
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	146,610	-	-	146,610
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,790,128	-	-	4,790,128
Այլ ակտիվներ	385	3,426	-	3,811
Ընդամենը ակտիվներ	5,192,678	3,426	-	5,196,104
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,477,139	-	-	4,477,139
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	706	-	-	706
Այլ պարտավորություններ	12,957	-	-	12,957
Ընդամենը պարտավորություններ	4,490,802	-	-	4,490,802
Զուտ դիրք	701,876	3,426	-	705,302

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը ֆինանսական շուկայում անբարենպաստ փոփոխությունների հետևանքով վնասներ կրելու ռիսկն է: Այն կազմված է երեք բաղադրիչներից՝ տոկոսային, արժույթային և գնային ռիսկերից:

Արտարժույթային ռիսկ

Արժույթային ռիսկը արժույթային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժույթային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

Արտարժույթային դիրքը Ընկերության արտարժույթային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժույթային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Արտարժույթային դիրքերը սահմանվում են՝

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Արտարժույթային առավելագույն դիրքը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.

1) արտարժույթային երկար դիրքերի հանրագումարի և արտարժույթային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծություններից առավելագույն մեծություն,

2) թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Արտարժույթային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով:

Արտարժույթային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում արտարժույթային ռիսկ պարունակող այն ակտիվները, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից:

Արտարժույթային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով արտարժույթային ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԱՌ = առավելագույն (ԱԱԴ1, ԱԱԴ2, ..., ԱԱԴՆ) որտեղ՝

ԱՌ-արտարժույթային ռիսկն է,

ԱԱԴ1, ԱԱԴ2, ..., ԱԱԴՆ - արտարժույթային առավելագույն դիրքի 12 տոկոսն է՝ ըստ հաշվետու ամսվա օրերի,

Ն - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտարժույթային ռիսկի մակարդակը կազմում է 3,554.0 հազ. ՀՀ դրամ, իսկ 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 14,268.0 հազ. ՀՀ դրամ:

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

2013թ.

(հազար դրամ)

Ակտիվներ

Կանխիկ դրամական իջեցներ և
մնացորդներ Կենտրոնական բանկում
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական
կազմակերպությունների նկատմամբ
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող
իրական արժեքով հաշվառվող ֆինանսական
ակտիվներ
Հաճախորդների նկատմամբ պահանջներ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական
ակտիվներ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ
Այլ

Ընդամենը ակտիվներ

Պարտավորություններ

Պարտավորություններ բանկերի և այլ
ֆինանսական կազմակերպությունների
նկատմամբ
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
Այլ պարտավորություններ

Ընդամենը պարտավորություններ

Զուտ դիրք

ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
4,541	-	-	4,541
209,447	590	-	210,037
1,753	-	-	1,753
54,128	-	-	54,128
261,936	23,836	-	285,772
5,594,108	-	-	5,594,108
17,575	5,164	-	22,739
6,143,488	29,590	-	6,173,078
5,373,036	-	-	5,373,036
2,737	-	-	2,737
51,037	59	-	51,096
5,426,810	59	-	5,426,869
716,678	29,531	-	

2012թ.

(հազար դրամ)

Ակտիվներ

Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ
Կենտրոնական բանկում
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական
կազմակերպությունների նկատմամբ
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող
իրական արժեքով հաշվառվող ֆինանսական
ակտիվներ
Հաճախորդների նկատմամբ պահանջներ
Վաճառքի համար մատչելի ֆինանսական
ակտիվներ
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ
Այլ

Ընդամենը ակտիվներ

Պարտավորություններ

Պարտավորություններ բանկերի և այլ
ֆինանսական կազմակերպությունների
նկատմամբ
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
Այլ պարտավորություններ

Ընդամենը պարտավորություններ

Զուտ դիրք

ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
4,081	-	-	4,081
39,930	158,361	1,498	199,789
29,852	-	-	29,852
21,833	-	-	21,833
106,007	40,603	-	146,610
4,790,128	-	-	4,790,128
385	633	2,793	3,811
4,992,216	199,597	4,291	5,196,104
4,390,369	86,770	-	4,477,139
706	-	-	706
12,957	-	-	12,957
4,404,032	86,770	-	4,490,802
588,184	112,827	4,291	

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$S\Omega = S\Delta\Omega + S\Omega\Omega$, որտեղ՝

$S\Omega$ – տոկոսադրույքի ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

$S\Delta\Omega$ – տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

$S\Omega\Omega$ – տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի, ինչպես նաև փոփոխվող տոկոսադրույքով մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը, գրավադրված պարտքային արժեթղթերը, ինչպես նաև այն արտահաշվեկշռային ածանցյալ գործիքները, որոնց հիմքում ընկած է պարտքային արժեթուղթ: Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռքբերված արժեթղթերի գծով պարտավորությունները, որպես գրավ ստացված, ինչպես նաև Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո գտնվող պարտքային արժեթղթերը:

Պարտքային արժեթղթերի դիրքը պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

- 1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
- 2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
- 3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի.

- 1) պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական ինքնակառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,
- 2) հուսալի պարտքային արժեթղթեր, որոնց թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև

«ԱՐՄԵՆԲՐՈՒ» ԲԲԸ

Կենտրոնական բանկի կողմից .Բ-ն և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,

3) այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$SZN = (SZN1 + SZN2 + \dots + SZNL) / L, \text{ որտեղ } \backslash$$

SZN – տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

SZN1, SZN2, ..., SZN_L – պարտքային արժեթղթերի համախառն դիրքն է՝ ըստ օրերի:

«L» - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկն իրականացվում է պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերի համախառն գուտ դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն:

2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության տոկոսային ռիսկի մակարդակը կազմում է 9,913.0 հազ. ՀՀ դրամ, իսկ 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 7,450.0հազ. ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

	2013թ. տոկոսադրույքներ		2012թ. տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
<u>Ակտիվներ</u>				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ				7.7%
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	12%		12%	
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	10%	9%	10%	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	14.5%		14.0%	
<u>Պարտավորություններ</u>				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ		8.7%		10.%

Գնային ռիսկ

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը հաշվարկվում է առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների (բաժնային արժեթղթերի) համար:

Բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են նաև ռեպո համաձայնագրերով վաճառված բաժնային արժեթղթերը, գրավադրված բաժնային արժեթղթերը, ինչպես նաև այն արտահաշվեկշռային ածանցյալ գործիքները, որոնց հիմքում ընկած են բաժնային արժեթղթերը: Բաժնային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնային արժեթղթերը, ռեպո համաձայնագրերով ձեռք բերված բաժնային արժեթղթերի գծով պարտավորությունները, որպես գրավ ստացված, ինչպես նաև Ընկերության կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո կառավարվող բաժնային արժեթղթերը:

Բաժնային արժեթղթերի դիրքը, որպես ակտիվ հանդիսացող բաժնային արժեթղթերի (ինչպես նաև արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած բաժնային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող բաժնային արժեթղթերի (ներառյալ՝ արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած բաժնային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Բաժնային արժեթղթերի դիրքերը սահմանվում են՝

- 1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
- 2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
- 3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Բաժնային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես բաժնային արժեթղթերի տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

Բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրքը հաշվարկվում է որպես բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

Բաժնային արժեթղթերի դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով:

Բաժնային արժեթղթերի գնային ռիսկը բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկի և բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկի հանրագումարն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

$$ԲԱԳՌ = (ԸՌ1 + \dots + \dots + \dots) / \dots + (\dots + \dots + \dots) / \dots,$$

որտեղ՝

ԲԱԳՌ - բաժնային արժեթղթերի գնային ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով,

ԸՌ1 + \dots + \dots + \dots - բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկն է՝ ըստ օրերի,

\dots + \dots + \dots - բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկն է՝ ըստ օրերի,

\dots - հաշվետու ամսվա օրերի թիվն է:

Տվյալ օրվա համար բաժնային արժեթղթերի գնային ընդհանուր ռիսկը հավասար է տվյալ օրվա բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրքի 8 տոկոսի բացարձակ մեծությանը:

Տվյալ օրվա բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկը հավասար է տվյալ օրվա բաժնային արժեթղթերի համախառն դիրքին:

Համախառն դիրքի հաշվարկում բաժնային արժեթղթերի տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի.

- 1) իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի,
- 2) այլ բաժնային արժեթղթերի:

Բաժնային արժեթղթերը դասվում են իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի շարքին, եթե միաժամանակ բավարարվել են հետևյալ պայմանները.

1) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի, վարկային կազմակերպության կամ այլ ֆինանսական կազմակերպության բաժնային արժեթուղթ է կամ /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկի բաժնային արժեթուղթ, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ, կամ Կենտրոնական բանկի կողմից Գ-ե և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ ֆինանսական կազմակերպության բաժնային արժեթուղթ է, կամ /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության բաժնային արժեթուղթ, որը մտնում է սույն կանոնակարգի հավելված 1-ի 29-րդ կետի աղյուսակով սահմանվող որևէ բորսայական ինդեքսի մեջ,

2) բաժնային արժեթղթի դիրքը (կարճ կամ երկար) չի գերազանցում բաժնային արժեթղթերի համախառն դիրքի 10 տոկոսը:

Բաժնային արժեթղթերի գնային հատուկ ռիսկի հաշվարկման ընթացքում համախառն դիրքի հաշվարկում բաժնային արժեթղթերի դիրքերը (բացարձակ մեծությամբ) մտնում են հետևյալ կշիռներով.

- ա) իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի դիրքերը՝ 4 տոկոս,
- բ) այլ բաժնային արժեթղթերի դիրքերը՝ 8 տոկոս:

2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գնային ռիսկի մակարդակը կազմում է 10,362.0 հազ. ՀՀ դրամ, իսկ 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13,325.0 հազ. ՀՀ դրամ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար:

Իրացվելիության ռիսկի կարգավորման՝ դրա ազդեցության նվազման կամ չեզոքացման նպատակով կիրառվում են իրացվելիության նորմատիվները՝ բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն) և բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն):

2013թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև հարաբերակցությունը կազմել է 93.9%, իսկ բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև հարաբերակցությունը՝ 107.04%: 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 95.9% և 111.2%:

2013թ.

ԱԿՏԻՎՆԵՐ

Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ Կենտրոնական բանկում
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
Հաճախորդների նկատմամբ պահանջներ
Արժեթղթեր, այդ թվում՝
շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող
իրական արժեքով հաշվառվող
Վաճառքի համար մատչելի
մինչև մարման ժամկետը պահվող
Պայմանագրային պահանջներ

Ընդամենը

(հազար դրամ)						
մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
					4,541	4,541
					210,037	210,037
13,560				40,568		54,128
				5,714,102	167,531	5,881,633
					1,753	1,753
				239,942	45,830	285,772
				5,474,160	119,948	5,594,108
				3,753,240		3,753,240
13,560	-	-	-	9,507,910	382,109	9,903,579

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
Այլ պարտավորություններ
Պայմանագրային պարտավորություններ

Ընդամենը

մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
5,373,036						5,373,036
	2,737					2,737
7,073		44,023				51,096
16,561						16,561
5,396,670	2,737	44,023	-	-	-	5,443,430

2013թ.

ԱԿՏԻՎՆԵՐ

Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ, մնացորդներ Կենտրոնական բանկում
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
Հաճախորդների նկատմամբ պահանջներ
Արժեթղթեր, այդ թվում՝
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող
իրական արժեքով հաշվառվող
Վաճառքի համար մատչելի
Մինչև մարման ժամկետը պահվող
Պայմանագրային պահանջներ

Ընդամենը

(հազար դրամ)						
մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
					4,081	4,081
		105,052			94,737	199,789
5,600			16,233			21,833
		117,133	41,435	4,713,632	94,390	4,966,590
					29,852	29,852
			41,435	40,637	64,538	146,610
		117,133		4,672,995		4,790,128
		2,209	3,169	1,768,596		1,773,974
5600		224,394	60,837	6,482,228	193,208	6,966,267

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ
Այլ պարտավորություններ
Պայմանագրային պարտավորություններ

Ընդամենը

մինչև 1ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1 տարուց ավելի	Անժամկետ	Ընդամենը
4,390,369	86,770					4,477,139
	706					706
7,098		5,859				12,957
16,889						16,889
4,414,356	87,476	5,859				4,507,691

«Պայմանագրային պահանջներ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված (հաշվեկշռում կամ հետհաշվեկշռում չարտագրված), սակայն պայմանագրով նախատեսված ստացվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

«Պայմանագրային պարտավորություններ» տողում լրացվում են դեռևս չհաշվեգրված, սակայն պայմանագրով նախատեսված վճարվելիք բոլոր գումարները (այդ թվում՝ տոկոսագումարները)՝ ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների:

27. Պայմանական պարտավորություններ

1) Ներդրումային ընկերության իրավական պարտավորությունները

Ներդրումային ընկերության ղեկավարությունը հավաստիացնում է, որ ներդրումային ընկերությունը իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և իր իրավական պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

2) Ներդրումային ընկերության հարկային պարտավորությունները

Ներդրումային ընկերության ղեկավարությունը հավաստիացնում է, որ ընկերությունն ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները, և իր հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումների անհրաժեշտություն չկա:

28. Կապիտալ և կապիտալի համաժեշտություն

Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և գլխավոր տնօրենի համատեղ որոշմամբ սահմանվել են ընկերության գործունեության տնտեսական նորմատիվները, որոնցից են.

1. կանոնադրական կապիտալի նվազագույն չափը

2. ընդհանուր կապիտալի նվազագույն չափը

3. ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը սահմանվել է 1 միլիոն դրամ, իսկ ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ 300 միլիոն դրամ:

Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվել է 12 տոկոս:

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում կատարել է կապիտալի մակարդակի համար ղեկավարության կողմից սահմանված ներքին նորմատիվային պահանջները:

Արամ Կալիաջյան
Գլխավոր տնօրեն



Միրանուշ Խլղաթյան
Գլխավոր հաշվապահ

30.04.2014թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հայտարարում ենք, որ պատասխանատվություն ենք կրում.

1. ընկերության ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝
 - ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
 - բ. հիմնավորված գնահատումներ, հաշվարկներ կատարելու համար,
 - գ. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
 - դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
 - ե. ֆինանսական հաշվետվությունները ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,
2. ընկերության ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,
3. ընկերության ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ՝ մեր իրավասությունների սահմաններում, միջոցներ ձեռնարկելու համար

Հավաստիացնում ենք, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ

գլխավոր տնօրեն

Արամ Կայֆաջյան

գլխավոր հաշվապահ
30.04.2014թ.

Սիրանուշ Խլղաթյան

**«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2013թ-ի ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. 2013թ-ի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել Ընկերության առջև դրված խնդիրների լուծման ուղղությամբ, որոնք տվել են իրենց արդյունքները:

Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում: Այս խնդրի լուծման շրջանակներում ընկերությունը վարել է պասիվ ներդրումային քաղաքականություն՝ իր դրամական միջոցները հիմնականում ներդնելով բարձր հուսալիությամբ ֆինանսական ակտիվներում: Որպես այդպիսիք դիտարկվել են պետական պարտատոմսերը և բանկային ավանդները:

Մարուցվող ծառայությունների որակի բարձրացում և համապատասխանեցում միջազգային չափանիշներին: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ Ընկերությունը բացի տեղացի հաճախորդներից ունի նաև բազմաթիվ արտասահմանյան հաճախորդներ, որոնք սովոր են աշխատել միջազգային չափանիշներով: Այդ պատճառով ընկերությունը անընդհատ ուսումնասիրում է արտասահմանյան շուկաներում նմանատիպ ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից ծառայությունների մատուցման եղանակները՝ փորձելով ներդնել նրանց կուտակած փորձը իր կողմից ծառայությունների մատուցման ընթացքում:

Նոր հաճախորդների ներգրավում: Այս խնդիրը հատկապես կարևորվել է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայության առումով, քանի որ վերջինս պահանջում է տեխնիկական և մարդկային բավական լուրջ ռեսուրսներ և շահութաբեր է դառնում միայն մեծ թվով հաճախորդների առկայության դեպքում: Խնդրի լուծման նպատակով իրականացվել են մարկետինգային միջոցառումներ, մասնավորապես հեռախոսազանգերի և գրությունների միջոցով մատուցվող ծառայությունները և դրանց պայմանները ներկայացվել են բազմաթիվ պոտենցիալ հաճախորդների, որի արդյունքում հնարավոր է եղել ապահովել ռեեստրի վարման հաճախորդների թվի որոշակի աճ: Բացի այդ իրականացվել են նաև որոշ գովազդային միջոցառումներ, ինչպես նաև կիրառվել են ակցիաներ:

Ծառայությունների մարուցման ընթացակարգերի բարելավում: Քանի որ անընդհատ տեղի է ունենում տնտեսական և իրավական միջավայրի փոփոխություն, Ընկերության կողմից ընդունված ծառայությունների մատուցման ընթացակարգերը անընդհատ զգում են փոփոխման և բարելավման կարիք Խնդրի լուծման նպատակով որոշակի աշխատանքներ են տարվել այդ ընթացակարգերի թերությունները բացահայտելու ուղղությամբ և քայլեր են ձեռնարկվել դրանց վերացման ուղղությամբ:

Աշխատակիցների մասնագիտական մակարդակի կապարելագործում: Աշխատակազմի մասնագիտական մակարդակի բարձրացումը միշտ ընկերության առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է: Ընկերությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում իր աշխատակիցների ինքնակրթության համար, միշտ խրախուսելով մասնագիտական մակարդակի բարձրացման ցանկացած ձգտում: Միաժամանակ ընկերությունը զերծ չի մնում նաև աշխատակիցներին վերապատրաստման կուրսերի ուղարկելուց կամ այլ կազմակերպությունների ու երկրների համապատասխան

մասնագետների հետ փորձի փոխանակման հնարավորություններ տրամադրելուց: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում են քննարկումներ և դասընթացներ, այդ թվում նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում աշխատակիցների գիտելիքների բարձրացման համար:

Նոր աշխատակիցների ներգրավում: Ընկերության գործունեության ծավալների և մատուցվող ծառայությունների տեսականու ավելացմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջանում ներգրավել նոր աշխատակիցներ: 2013թ-ի ընթացքում Ընկերությունը նոր աշխատակիցներ է ներգրավել արժեթղթերի ռեեստրի վարման, հաշվապահական ձևակերպումների կատարման և հասարակության հետ կապի բնագավառների համար:

Ներքին հաշվառման համակարգի կադրեր լազործում: Այս խնդրի լուծումը հատկապես կարևորվում էր այն պատճառով, որ ճիշտ կազմակերպած ներքին հաշվառումը հաճախորդների հաշիվների սպասարկման որակը և արագությունը բարձրացնող ամենակարևոր գործոններից մեկն է: Այս խնդրի լուծման նպատակով համապատասխան մասնագետների հետ աշխատանքներ են տարվել Ընկերությունում կիրառվող ծրագրային մոդուլների թերությունների վերացման և Ընկերության տարատեսակ պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ:

Ընկերության գործունեության տեխնիկական պայմանների բարելավում: 2013թ-ի ընթացքում ընկերությունն իր ծառայությունների մատուցման համար ձեռք է բերել համակարգչային և այլ հարակից սարքավորումներ:

Արտասահմանում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ նոր գործարար կապերի ստեղծում և հների ամրապնդում: 2013թ-ի ընթացքում Ընկերությունն անընդհատ բանակցություններ է վարել իր արտասահմանյան գործընկերների հետ՝ ձգտելով էլ ավելի ամրացնել նրանց հետ ունեցած գործարար կապերը, ինչպես նաև ավելի նպաստավոր պայմաններ սահմանել նրանց միջոցով հաճախորդների սպասարկման համար: Ընկերությունը բանակցություններ է վարել նաև հնարավոր նոր գործընկերների հետ՝ փորձելով գործարար կապեր հաստատել նաև նրանց հետ, ինչը հնարավորություն կտա մեծացնել հաճախորդների սպասարկման հնարավորությունները և նրանց առաջարկվող ֆինանսական գործիքների տեսականին:

Ընկերության ճանաչվածության աստիճանի բարձրացում: Նոր հաճախորդներ ներգրավելու տեսանկյունից այս խնդիրը շարունակում է մնալ շատ կարևոր: Այդ կապակցությամբ Ընկերությունը շարունակել է տարածել իր մասին և մատուցվող ծառայությունների մասին համառոտ տեղեկություններ ներկայացնող թերթիկներ, իսկ Ընկերության կայքն արդեն բավական երկար ժամանակ գործում է և պարբերաբար թարմացվում են: 2013թ-ի ընթացքում իրականացվել է ընկերության կայքի վերափոխում, ինչի արդյունքում այն դարձել է ավելի պարզ, գրավիչ և հեշտ կիրառելի:

Գործունեության նոր բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտում և գնահատում: Հաշվի առնելով ՀՀ կենսաթոշակային համակարգում և ֆինանսական շուկայում տեղի ունեցող զարգացումները Ընկերության համար մեծ կարևորություն ունի Գործունեության նոր բնագավառներ մուտք գործելու հնարավորությունների բացահայտում և գնահատում: Մասնավորապես դա վերաբերում է կենսաթոշակային և այլ ներդրումային ֆոնդերին տարատեսակ ծառայությունների մատուցման շուկաներ մուտք գործելու հնարավորություններին: Այդ կապակցությամբ իրականացվել են տնտեսական և իրավական միջավայրերի մի շարք հետազոտություններ,

ինչպես նաև վարվել են բանակցություններ և քննարկումներ արբեր գործընկերների և պաշտոնատար անձանց հետ:

2. Ընկերության ներքին միջավայրում տեղի ունեցած երևույթներն իրենց ազդեցությունն են ունեցել ընկերության գործունեության վրա դրա բոլոր բնագավառներում: այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս Ընկերությունը չունեցավ լրացուցիչ կապիտալ ներգրավելու խնդիր: Ընկերության սեփական կապիտալը 2013թ-ի վերջում կազմեց 757,696.00 հազար դրամ, նախորդ տարվա վերջի 717,416.00 հազար դրամի փոխարեն: Վերոնշյալ աճը պայմանավորված էր բացառապես Ընկերության կուտակված շահույթի աճով:

բ) 2013թ-ի ընթացքում Ընկերությունը մատուցել է հետևյալ ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում (այդ թվում հեռացված տերմինալների միջոցով), ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
- Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին,
- Ընկերության հաշվին և ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում,
- Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում,
- Արժեթղթերի պահառություն,
- Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում,
- Արտարժույթով դիվերային և բրոքերային գործարքներ,
- Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում,
- Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում:

2013թ-ի ընթացքում Ընկերության կողմից կատարված գործունեության յուրաքանչյուր տեսակին անդրադառնանք առանձին-առանձին:

հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում (այդ թվում հեռացված տերմինալների միջոցով), ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում: Ծառայության այս տեսակը Ընկերության համար հիմնական ծառայության տեսակ է եղել Ընկերության գործունեության ամենասկզբից: 2013թ-ի ընթացքում Ընկերությունը հաճախորդների հաշվին կատարել է 1,773,459.00 հազար դրամի առքուվաճառքի գործարքներ: Ծառայությունների այս խմբի հետ կապված կարևոր հանգամանք է այն, որ 2009թ-ից ընկերությունը սկսել է իրականացնել իր հաճախորդների տերմինալային սպասարկում, որի շրջանակներում 2013թ-ին սպասարկել է 79 հաճախորդների, սակայն այդ ծառայության արդյունքները գնահատվել են որպես ոչ

բավարար և Ընկերությունը որոշում է կայացրել դադարեցնել այդ ծառայության մատուցումը: Գործունեության այս տեսակից ընկերության ստացած հասույթը կազմել է 19,781.00 հազար դրամ: Ընդհանուր առմամբ այս ծառայության գծով ստացված փաստացի ցուցանիշները գերազանցում են պլանավորվածին, ինչը թույլ է տալիս հետագա տարիների համար բարձրացնել ցուցանիշների պլանային մակարդակը: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ 2013թ-ին ինչպես և նախատեսված էր հանդես են եկել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդարկության տրամադրում հաճախորդներին: Այս ծառայությանը հնարավոր չէ ծավալային գնահատական տալ: Ծառայության այս տեսակը սերտորեն առնչվում է նախորդի հետ: Շատ դեպքերում դրանք անբաժանելի են, այդ իսկ պատճառով որպես այս ծառայության հաճախորդներ կրկին դիտարկվում են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, այդ թվում ինստիտուցիոնալ ներդրողները: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը նույնպես հնարավոր չէ առանձնացնել, քանի որ Ընկերությունը սովորաբար այս ծառայության համար հաճախորդներից առանձին վճար չի գանձում, և այս ծառայության վճարը ներառվում է հաճախորդի հաշվին գործարքների կատարման միջնորդավճարի մեջ:

Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով գործարքների կատարում: 2013թ-ին Ընկերությունն իր հաշվին և իր անունից արժեթղթերով կատարել է 157,785,511.00 հազար դրամի գործարք, որից 333,088.00 հազար դրամը՝ կորպորատիվ արժեթղթերով, իսկ 157,452,423.00 հազար դրամը՝ պետական: Պետական արժեթղթերով կատարված գործարքների գերակշիռ մասը կազմել են ռեպո գործարքները: Գործունեության այս տեսակից ընկերության զուտ շահույթը 2013թ-ին կազմել է 44,482.00 հազար դրամ: Գործունեության այս տեսակից ստացված փաստացի ցուցանիշները ընդհանուր առմամբ գերազանցում են պլանավորված մակարդակը: Դա ստիպում է որոշակի ճշգրտումներ մտցնել հետագա տարիների պլանների մեջ՝ մեծացնելով արժեթղթերով գործարքների ծավալների պլանային մակարդակները:

Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում: Ինչպես և պլանավորված էր, 2013թ-ին Ընկերությունը Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների գծով հաճախորդներ չունեցավ: Դա կրկին կապվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության, ինչպես նաև Հայաստանի արժեթղթերի շուկայի ընդհանուր պասիվության հետ: Պոտենցիալ թողարկողների մեծ մասը այս անկայուն իրավիճակում, երբ շատ դժվար է գնահատել ներդրողներ գտնելու հավանականությունը, դեռևս պատրաստ չէ դիսկի դիմել և մտնել արժեթղթերի թողարկման ձևով միջոցների հավաքագրման գործընթացի մեջ:

Արժեթղթերի պահառություն: Ծառայության այս տեսակը Ընկերության համար նոր էր: Նախատեսվում էր, որ որպես հաճախորդներ պետք է հանդես գային այն ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք պետք է օգտվեին ընկերության ծառայություններից արժեթղթերի արտասահմանյան շուկաներում ներդրումներ կատարելու համար, ինչպես նաև այն ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք պետք է օգտվեին ընկերության բրոքերային ծառայություններից տեղական շուկայում: Չնայած սպասումներին՝ ծառայությունից օգտվել ցանկացողների թիվը մեծ չեղավ, ինչի արդյունքում 2013թ-ի ընթացքում չկնքվեց արժեթղթերի պահառության ոչ մի պայմանագիր:

Գործունեության այս տեսակի գծով փաստացի ստացված ցուցանիշները զիջում են պլանավորվածին, ինչը ստիպում է ճշգրտումներ կատարել հետագա տարիների պլաններում:

Բացի այդ Ընկերությունը այս ծառայությունը մատուցում է նաև որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի հաշվի օպերատոր, որի շրջանակներում արժեթղթերի պահառության պայմանագրեր է կնքել 1685 հաճախորդների հետ: Դա կրկին ավելի ցածր ցուցանիշ է, քան պլանավորված էր, ինչից ելնելով էլ փոփոխություններ պետք է կատարվեն հետագա տարիների պլաններում:

Գործունեության այս տեսակից Ընկերության ստացված հասույթը 2013թ-ին կազմեց 30,487.00 հազար դրամ, որն իր մեջ ներառում է արժեթղթերի և դեպո հաշիվների վարման դիմաց և այդ հաշիվներում առկա արժեթղթերով կատարված գործառնությունների (փոխանցում, գրավադրում և այլ) դիմաց ստացված հասույթը:

Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարում: Այս ծառայության բնագավառը կարգավորող իրավական դաշտի կտրուկ փոփոխության հետևանքով Ընկերությունը ստիպված եղավ լուծել իր հետ ռեեստրի վարման պայմանագրեր կնքած անձանց պայմանագրերը և նրանց հետ կնքել նոր պայմանագրեր, որոնցում արդեն հանդես է գալիս որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի հաշվի օպերատոր: Սակայն այդ փոփոխությունը ոչ միայն չնվազեցրեց Ընկերության հաճախորդների քանակը, այլև ավելացրեց 2013թ-ի վերջի դրությամբ արդեն ընկերությունը սպասարկում էր ավելի քան 700 թողարկողների՝ պլանավորված 500-ի փոխարեն: Որպես այս ծառայության գծով հաճախորդներ հանդես են գալիս ռեզիդենտ իրավաբանական անձինք, որոնք ունեն թողարկված հասարակ և արտոնյալ բաժնետոմսեր, ինչպես նաև պարտատոմսեր: Ծառայության այս տեսակից ստացված հասույթը 2013թ-ին կազմեց 40,536.00 հազար դրամ, որն իր մեջ ներառում է ռեեստրի վարումից, ինչպես նաև թողարկողների հանձնարարականներով տարբեր գործառնությունների կատարումից ստացված հասույթը:

Արտարժույթով դիլերային և բրոքերային գործարքներ: Ընկերությունը 2013թ-ին իրականացրել է մեծ ծավալի արտարժույթային դիլերային-բրոքերային գործարքներ: 2013թ-ի վերջի դրությամբ ընկերության արտարժույթային երկար դիրքը կազմել է 29,531.00 հազար դրամ, արտարժույթի առքուվաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է 71.00 հազար դրամ, իսկ արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ եկամուտը կազմել է 749.00 հազար դրամ: Ընկերությունը կատարել է նաև արտարժույթով բրոքերային գործարքներ՝ կապված իր հաճախորդների՝ արտարժույթով արտահայտված դրամական միջոցները դրամի վերածելու հետ և հակառակը: Այդ գործարքները կատարվել են հաճախորդների համար արժեթղթերով բրոքերային գործարքների կատարման շրջանակներում, ինչպես նաև այն դեպքերում, երբ հաճախորդները ցանկություն են հայտնել ետ վերցնել իրենց բրոքերային հաշիվներում առկա դրամական միջոցները:

Խորհրդատվության տրամադրում ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցում: Այս ծառայության գծով ընկերությունը ունի երկարաժամկետ պայմանագրեր, որոնցով հաճախորդներին անընդհատ խորհրդատվություն է մատուցում: Բացի այդ ընկերությունը 2013թ-ի ընթացքում կնքել է նաև կարճաժամկետ պայմանագրեր, որոնցով խորհրդատվություն է մատուցվել կոնկրետ դեպքի կամ հարցի առնչությամբ: Որպես

հաճախորդ, հանդես են եկել հայաստանյան բաժնետիրական ընկերությունները: Այս ծառայությունից ստացված հասույթը 2013թ-ին կազմել է 4,580.00 հազար դրամ:

Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների կազմում և տարածում: Ընկերությունը երկշաբաթյա պարբերականությամբ իր հաճախորդներին տրամադրում է Հայաստանի կապիտալի շուկայի վերաբերյալ տեղեկատվական նյութ, որում արտացոլվում են շուկայում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները: Այս ծառայությունը մատուցվում է որպես հաճախորդների որակյալ սպասարկման անբաժանելի մաս, որի դիմաց հաճախորդներից վճար չի գանձվում:

գ) Ընկերության 2013թ-ի հասույթը կազմել է 843,984.00 հազար դրամ որից 668,728.00 հազար դրամը տոկոսային եկամուտն է, իսկ 175,255.00 հազար դրամը՝ ոչ տոկոսային եկամուտը, որը ներառում է նաև ընկերության կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտը: Ըկերության ծախսերը կազմել են 679,749.00 հազար դրամ, որից տոկոսային ծախսերը կազմել են 431,322.00 հազար դրամ, իսկ ոչ տոկոսային ծախսերը՝ 248,426.00 հազար դրամ: Ընկերության շահույթը հարկումից հետո կազմել է 164,233.00 հազար դրամ: Ընկերության կառավարման տնտեսական ակտիվության գործակիցը կազմել է 0.25, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 0.03, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 0.22: Վերոնշյալ ցուցանիշների փաստացի մակարդակները շատ մոտ են դրանց պլանային մակարդակների հետ, սակայն զիջում են դրանց: Դա պայմանավորված է Ընկերության որոշ ֆինանսական ակտիվների արժեզրկմամբ, ինչպես նաև ռեպո գործարքների շահութաբերության սպասվածից ցածր մակարդակով, ինչը պայմանավորված էր պետական պարտատոմսերի շուկայական եկամտաբերությունների կտրուկ աճով: Ստացված ցուցանիշները շատ ավելի մեծ կարող էին լինել, եթե առկա չլիներ բազմաթիվ բացասական գործոններ, որոնցից ընկերության վրա առավել մեծ ազդեցություն ունեցան մի քանիսը. 1) Հայաստանի արժեթղթերի շուկայում գրանցված ընդհանուր պասիվությունը, 2) ներդրողների և թողարկողների անվստահությունը Հայաստանի արժեթղթերի շուկայի նկատմամբ, 3) Ընկերության արտասահմանցի հաճախորդների ֆինանսական վիճակի վատթարացումը, որը թույլ չի տալիս, որպեսզի նրանք ներդրումներ կատարեն հայկական արժեթղթերում:

դ) 2013թ-ի ընթացքում Ընկերությունը սպասարկել է թվով 2711 հաճախորդների: Դրանցից 202-ը օգտվել են իրենց հաշվին և իրենց կամ ընկերության անունից արժեթղթերով գործարքներ կատարելու ծառայությունից, 730-ը օգտվել են անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման ծառայությունից, 79-ը օգտվել են ընկերության տերմինալային սպասարկումից, 6-ը օգտվել են խորհրդատվական ծառայություններից, 1694-ը օգտվել են արժեթղթերի պահառության ծառայությունից: Ընդհանուր առմամբ ընկերության հաճախորդների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է, ինչը հիմնականում պայմանավորված է արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի հաշվի օպերատորի գործունեության հաճախորդների քանակի աճով:

ե) Ընկերության կառավարման համակարգը լիարժեքորեն բավարարում է ներկա պահին ընկերության գործունեության բոլոր բանգավառները արդյունավետ կառավարելու և վերահսկելու համար:

եա) Ընկերության կորպորատիվ կառավարման մեխանիզմը հստակեցված է Ընկերության կանոնադրությունում: Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվել,

ինչը որոշակի բարդություններ է ստեղծում նոր ներքին իրավական ակտերի ընդունման գործընթացում, քանի որ Ընկերությունը բաժնետերեր ունի բազմաթիվ երկրներից, որոնց ներկայությամբ բաժնետերերի ժողով հրավիրելը կապված է որոշակի բարդությունների հետ: Այդ կապակցությամբ չի բացառվում, որ մոտ ապագայում Ընկերությունում ձևավորվի նաև տնօրենների խորհուրդ:

Եբ) Ընկերությունում գործում է նաև ներքին աուդիտի ստորաբաժանումը, որը վերահսկում է Ընկերության գործունեության բոլոր բնագավառները: Այդ ստորաբաժանումը, բացի Ընկերության գործունեության անընդհատ մոնիտորինգից, ամեն ամիս իրականացնում է նաև Ընկերության գործունեության ստուգում և բացահայտված ցանկացած խախտման կամ թերացման մասին տեղեկություն է ներկայացնում Ընկերության գործադիր մարմնին, Կենտրոնական բանկին, ինչպես նաև կարգավորվող շուկայի օպերատորին և հաշվարկային համակարգի օպերատորին: Միաժամանակ ստորաբաժանումը նաև տարեկան հաշվետվություն է ներկայացնում Ընկերության կառավարման բարձրագույն մարմնին՝ բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Եգ) 2013թ-ին Ընկերության համար առավել կարևոր են եղել հետևյալ ռիսկերը.

- վարկային ռիսկ. գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,
- ֆոնդային ռիսկ. ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության փոփոխության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- տոկոսային ռիսկ. փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- արժութային ռիսկ. արժութային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը,
- իրացվելիության ռիսկ.
 - o շուկայական իրացվելիության ռիսկ. շուկայում ընդհանուր իրացվելիության պակասի ռիսկն է, որի դեպքում կարող է հնարավոր չլինել արագ և արդյունավետ ձևով փակել բացված դիրքերը և ստանալ դրամական միջոցներ,
 - o ներքին իրացվելիության ռիսկ. իրացվելիության գործակիցների նվազագույն մակարդակ ապահովելու հնարավորության բացակայության ռիսկ կամ այլ խոսքերով այն ռիսկը, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար,

- o բանկերի իրացվելիության ռիսկ. Հայաստանի բանկային համակարգում իրացվելի միջոցների պակասի ռիսկն է, որն ի հայտ է գալիս ռեպո գործարքների կնքման դեպքում:
- պորտֆելի կոնցենտրացիայի ռիսկ.
 - o գործիքի կոնցենտրացիայի ռիսկ. պորտֆելում մեկ գործիքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
 - o գործարքի կոնցենտրացիայի ռիսկ. մեկ տեսակի գործարքի գծով վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
 - o տնտեսական հատվածի ռիսկ. տնտեսության առանձին հատվածում (առանձին տարածաշրջանում կամ երկրում) գրաված վնասաբեր դիրքերի կոնցենտրացիայի ռիսկն է,
- գործառնական ռիսկ. գործառնությունների կատարման ընթացքում հնարավոր սխալների ռիսկը, որն իր մեջ ներառում է գործարքների կնքման ընթացքում սխալների, գործարքների քլիրինգի և վերջնահաշվարկի իրականացման հետ կապված սխալների, սպասարկող բանկերի կողմից փոխանցումների կատարման հետ կապված սխալների, ընկերությունում և գործընկերների մոտ տեխնիկական համակարգերի խափանումների հետ կապված ռիսկը,
- պատվերների չկատարման ռիսկ. հաճախորդների պատվերները կատարելու հնարավորության բացակայության ռիսկ՝ կապված շուկայում առաջարկի կամ պահանջարկի բացակայության հետ,
- իրավական ռիսկ. իրավական դաշտում անբարենպաստ փոփոխությունների ի հայտ գալու ռիսկ,
- տրամադրված խորհրդատվության բացասական հետևանքների առաջացման ռիսկ. ընկերության կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում հաճախորդների կատարած քայլերի բացասական հետևանքներ ի հայտ գալու ռիսկ,
- թերտեղաբաշխման ռիսկ. տեղաբաշխման գործունեության իրականացման հետ կապված ռիսկն է, որը դրսևորվում է նախապես սահմանված տեղաբաշխման ենթակա արժեթղթերը լրիվ ծավալով տեղաբաշխելու հնարավորության բացակայությամբ,
- հաճախորդի ներդրումային քաղաքականության փոփոխության ռիսկ. հաճախորդների կողմից ընկերության միջոցով կատարվելիք ներդրումների նախատեսված ծավալները կրճատվելու ռիսկ,
- գործարար համբավի կորստի ռիսկ. շուկայում հեղինակության անկման պատճառով կորուստներ կրելու ռիսկ,
- քաղաքական ռիսկ. երկրի քաղաքական համակարգում ցնցումների հետևանքով վնասներ կրելու ռիսկ,
- Դժբախտ պատահարների ռիսկ. երկրաշարժի, հրդեհի, կողոպուտի և այլ դժբախտ պատահարների հետևանքով կորուստներ կրելու ռիսկ:

Վերը նշված ռիսկերի գնահատման և դրանց զսպման նպատակով ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և գլխավոր տնօրենը համատեղ մշակել են ընկերության գործունեության տնտեսական նորմատիվներ և դրանց հաշվարկման մեթոդոլոգիա: Այդ նորմատիվները հաշվարկվում են օրական և ամսական կտրվածքներով և

դրանց խախտման դեպքում միջոցառումներ են ձեռնարկվում այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

զ) Ընկերությունը առանձնացված ստորաբաժանումներ չունի և 2013թ-ի ընթացքում չի բացել, ինչը լիովին համապատասխանում է ընկերության գործարար ծրագրին:

է) Ընկերությունը 2013թ-ի վերջի դրությամբ ունի 23 աշխատակից, որոնցից 5-ը ունեն ներդրումային ընկերության գործադիր մարմնի ղեկավարի որակավորում, երկուսը՝ ներդրումային ընկերության ներքին աուդիտի ղեկավարի որակավորում, իսկ 3-ը՝ պահառուի որակավորում: 2013թ-ի ընթացքում մի քանի անգամ կազմակերպվել են կոլեկտիվի հավաքներ, որոնց նպատակն է եղել ընկերությունում առկա խնդիրների վերհանումը, ինչպես նաև աշխատակիցների միջև փորձի փոխանակումը: Ընկերությունը աշխատակիցների մոտ ընկերության նկատմամբ նվիրվածությունը բարձրացնելու նպատակով կիրառել է նաև պարգևատրման մեխանիզմներ:

ը) 2013թ-ի ընթացքում ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ցանկում և դրանց մատուցման մեխանիզմներում միակ նորամուծությունը եղել է այն, որ Ընկերությունը դարձել է արժեթղթերի հաշվառման և հաշվարկային համակարգի անդամ և սկսել է արժեթղթերի ռեստորի վարման և արժեթղթերի հաշիվների սպասարկման ծառայությունները մատուցել «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից տրամադրված ծրագրային համակարգով:

թ) Ընկերության կողմից 2013թ-ի ընթացքում իրականացվել են մի շարք մարկետինգային միջոցառումներ: Մասնավորապես բազմաթիվ պոտենցյալ հաճախորդների ուղարկվել են ընկերության ծառայությունները ներկայացնող թերթիկներ, ընկերության աշխատակիցներն ընկերության մատուցած ծառայությունները և դրանց պայմանները ներկայացրել են նաև հեռախոսազանգերի միջոցով: Բացի այդ իրականացվել է նաև գովազդ. ընկերության ծառայությունները ներկայացնող գովազդային բաներներ են տեղադրվել մի շարք ինտերնետային կայքերում:

3. Արտաքին միջավայրում տեղի ունեցած երևույթները ունեցել են իրենց ազդեցությունը Ընկերության քաղաքականության և նրա գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը դրսևորվել է հետևյալ առումներով.

ա) չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի արժեթղթերի շուկան դեռևս ինտեգրված չէ միջազգային ֆինանսական շուկայի հետ, համաշխարհային ֆինանսական ճգնաժամը 2013թ-ին շարունակեց իր բացասական ազդեցությունը ունենալ ընկերության գործունեության արդյունքների վրա: Այդ ազդեցությունը, ինչպես նախորդ տարում, այս տարում նույնպես դրսևորվեց ընկերության հաճախորդների պասիվության միջոցով, որոնց մեծ մասը ընդհանրապես զերծ մնաց ներդրումներ իրականացնելուց, իսկ մի մասն էլ իրականացրեց, սակայն ոչ այն ծավալով, որով կիրականացներ, եթե չլիներ ճգնաժամը: Դրա արդյունքում կրճատվեց նաև ընկերության կողմից գանձվող միջնորդավճարի ծավալը:

բ) Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի բացասական ազդեցությունը շարունակվեց նաև Հայաստանի ողջ տնտեսության վրա, ինչի արդյունքում 2013թ-ին գրանցվեց տնտեսական ակտիվության ոչ այնքան մեծ մակարդակ (2013թ-ի տնտեսական ակտիվության գործակիցը նախորդ տարվա համեմատ կազմեց 105.6%): Հայաստանի տնտեսությունը դեռևս չի կարողանում վերականգնել իր ներդրումային գրավչության առանց այդ էլ ցածր մակարդակը: Այդ պարագայում առավել բարդ է արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպումը, նախ որովհետև ավելի դժվար է գտնել այնպիսի թողարկողներ, որոնց

ֆինանսական դրությունը թույլ է տալիս իրականացնել նման գործողություն և որոնք ցանկություն ունեն իրականացնել թողարկումը, և երկրորդ, որովհետև շատ դժվար է նաև գտնել ներդրողներ, որոնք կցանկանան գնել նոր թողարկվող արժեթղթեր: Այդ իսկ պատճառով Ընկերությունը 2013թ-ի ընթացքում չկազմակերպեց արժեթղթերի ոչ մի հրապարակային տեղաբաշխում:

գ) NASDAQ OMX Group-ի մուտքը Հայաստանի կապիտալի շուկա այդպես էլ չտվեց այն արդյունքները, որոնք սպասվում էին: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի կապիտալի շուկան դեռևս գտնվում է NASDAQ OMX Group-ի պահանջներին և մոտեցումներին համապատասխանեցման անցումային փուլում: Դրա հետ մեկտեղ ակնհայտորեն մեծացել է նաև ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտի մրցակցությունը, շնորհիվ այն բանի, որ մի շարք բանկեր արդեն մուտք են գործել շուկա և առաջարկում են իրենց ներդրումային ծառայությունները: Ընդ որում բանկերը, լինելով ֆինանսապես ավելի հզոր կառույցներ, ավելի հեշտ են կարողանում պոտնցիալ հաճախորդներին համոզել, որպեսզի վերջիններս օգտվեն իրենց ծառայություններից:

դ) Հայաստանի արժեթղթերի շուկան կարգավորող իրավական դաշտը շարունակում է մնալ խիստ դինամիկ և հաճախակի փոփոխությունների ենթարկվող: Այդ փոփոխությունների հաճախականությունը այնքան մեծ է, որ շատ դեպքերում մինչև ընկերությունները հասցնում են ադապտացվել նախկին փոփոխությանը, ի հայտ է գալիս նորը: Օրենսդրական դաշտի նոր լինելու հանգամանքը որոշակի բարդություններ է ստեղծում, այն պատճառով, որ հաճախ առաջանում են իրավական ակտերի տարբեր դրույթների կիրառման հետ կապված հարցեր, որոնց միանշանակ պատասխանը հնարավոր չի լինում գտնել: Ընկերությունը ստիպված է լինում սպասել, մինչև Կենտրոնական բանկը կտա կոնկրետ հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանում: Բացի այդ նոր իրավական ակտերի պահանջների բավարարումը կապված է նաև որոշակի ծախսերի հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Ընկերության վերլուծական բաժնի աշխատանքի արդյունքում բացահայտվել է, որ «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն ունի հետևյալ ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. Ընկերությունը շուկայում գործում է ավելի քան 15 տարի (ավելի երկար, քան Հայաստանի արժեթղթերի շուկայում գործող ցանկացած այլ ոչ բանկ ֆինանսական ընկերություն),
2. Ընկերության աշխատակիցների մեծ մասն ունի արժեթղթերի շուկայում գործելու մասնագիտական որակավորման հավաստագիր,
3. Ընկերությունն ունի հավատարիմ հաճախորդների լայն շրջանակ, այդ թվում ոչ ռեզիդենտներ և ինստիտուցիոնալ ներդրողներ,
4. Ընկերությունն ունակ է իր հաճախորդներին ապահովել Հայաստանի ֆինանսական շուկայի վերաբերյալ վերջին նորություններով և վերլուծական նյութերով, նաև ներկայացնել Հայաստանում շրջանառվող արժեթղթերի գների առաջին ինդեքսը, որի ստեղծողը հենց «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ն է,

5. Ընկերության աշխատակիցները երիտասարդ և նպատակասլաց են, ինչը նրանց օգնում է արագ և հեշտ հարմարվել փոփոխվող միջավայրին, լիովին հասկանալ բոլոր նորամուծությունները և արդյունավետ գործել շուկայում,
6. Ընկերությունը Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ոչ բանկ ընկերություններից առաջինն է և միակը, որ ունի բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ և հակված է աշխատել առավելագույն թափանցիկության պայմաններում,
7. Ընկերությունը կորպորատիվ արժեթղթերի շուկայում զբաղեցնում է առաջատար դիրքեր՝ 2013թ-ին կատարելով Հայաստանի ֆոնդային բորսայում կորպորատիվ արժեթղթերով կնքված բոլոր գործարքների ընդհանուր ծավալի շուրջ 60%-ը,
8. Ընկերությունը Հայաստանի արժեթղթերի շուկայում գործունեություն ծավալող ներդրումային ընկերությունների շարքում ամենամեծ սեփական կապիտալը ունեցող ընկերություններից մեկն է,
9. Ընկերությունն ունի հատուկ իր համար գրված և իր կողմից մատուցվող ծառայություններին համապատասխանեցված համակարգչային ծրագրեր:

Թույլ կողմեր

1. Ընկերության սեփական ֆինանսական ռեսուրսների կառավարման եկամտաբերությունը ցածր է,
2. ընկերությունը դեռևս չի հանդիսանում համալիր ներդրումային ծառայություններ մատուցող անձ, քանի որ չի իրականացնում արժեթղթերի փաթեթի կառավարման գործունեություն,
3. Ընկերության կողմից վարվող գովազդային քաղաքականությունը արդյունավետ չէ և չի կարողանում ապահովել հաճախորդների հոսքի ցանկալի մեծություն,
4. ընկերության ներքին հաշվառման համակարգի ավտոմատացումը դեռևս բավարար մակարդակի վրա չէ,
5. ընկերության ներսում տեղեկատվության հոսքը աշխատակիցների և տարբեր բաժինների միջև արդյունավետ չէ,
6. Ընկերության ֆինանսական հնարավորությունները մրցակից բանկերի համեմատությամբ փոքր են,
7. Ընկերությունը չունի դիտորդ խորհուրդ, ինչը նվազեցնում է ընկերության կառավարման արդյունավետությունը:

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ գլխավոր տնօրեն

Ա. Կայֆաջյան

30/04/2014թ.